№ 7—8 (234) XXIII ՏԱՐԻ ՅՈՒԼԻՍ—ՕԳՈՍՏՈՍ 1913

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENEVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ԱՋԱԼՈՒՐՔ

Կացութիւնը Արևելքում դեռ երկար ժամանակ կը մնայ տարտամ ու երերուն, լի ամեն տեսակ անակնկալներով—և այդ ահաւոր կացութեան հանդէպ՝ հայութիւնը մի վայրկեան անգամ չպիտի մոռանայ աչալուրջ հսկողութեան իր պարտաւորութիւնը։

Պեսսիմիզմի, յոռետեսութեան շեշտ չէ, որ կուզենք հնչեցնել,—ընդհակառակը՝ թուում է թէ երբէք քաղաքական պայմանների դասաւորումը չի եղել այնքան յուսատու և նպաստաւոր մեր դատի համար, ինչպէս այժմ։

Հայոց հարցը գարձել է այնքան այժմէական, նրա առկախ վիճակը ծն աստիճան վտանգաւոր միջազգային խաղաղութեան համար, նրա լուծման անհրաժեշտութիւնը այն աստիճան ակներև ու ստիպողական՝ որ շահագրգռուած պետութիւնները պիտի շտապեն ըստ կարելւոյն շուտ իրագործել այն minimum-ը բարենորոգումների, որոնք կարող են բաւարարել հայ ժողովուրդը և անդորրութիւն սահմանել հայկական հողի վրայ։

Որովհետև... այդ հողը այժմ խիստ „քաղցրացել է", դառնալով կատաղի, չտեսնուած մրցումների առարկայ։ Նրա վրայից մոտ ապագայում պիտի տարածուի եւրոպական, ֆրանսիական երկաթուղիների ցանցը, նրա սահմաններից, մասամբ նոյնիսկ նրա ծոցում, պիտի գործէ շուտով միջազգային հաղորդակցութեան ամենաուժեղ զարկերակը—Բաղդադեան երկաթուղին—և նրա, այդ հողի, բնական հարստութիւնները պիտի սկսին շահագործուիլ հմուտ ձեռքերով, ի նպաստ երկրի հանուր բարգաւաճման, յօգուտ նոյն իրեն՝ հայ ժողովրդի։

Այդ հրապուրիչ հեռապատկերը — որի մշուշապատ խորշերի մէջ ոմանք արդէն ընդնշմարում են քաղաքական նուաճումի հզօր ժեստեր — այժմից իսկ մղում է մեծ պետութիւններին դիրք բռնել Հայաստանի ու հայկական խնդրի հանդէպ, որի այս կամ այն տնօրինումից կախուած է ամբողջ Թիւրքական Արևելքի ճակատագիրը։

Եւ զարմանալի չէ, որ Եւրոպական Թիւրքիոյ մեծ կենտրոնները առժամապէս հարթուելուց յետոյ՝ արևմտեան մամուլը վերստին ահա դարձնում է իր ուշադրութիւնը դէպի Հայաստան, դէպի „ահաւոր հայկական հարցը", —ինչպէս որակում է այն՝ անգլիական մի մեծ օրգան։

Ահա թէ ինչպէս է վեր հանում մեր խնդրի այդ ծանրակշիռ հանգամանքը՝ պարիզեան Temps-ը, մի ընդարձակ և խիստ շահեկան թղթակցութեան մէջ.

Հայկական խնդիրը հանդիսանում է Թիւրք պետութեան մէջ տարբերաւորման մի հզօր ու գործօն տարրը։ Հայոց հաւատարմութիւնը օսմանեան տիրապետութեան հանդէպ ոչինչ է, հիասթափութիւնը՝ կատարեալ և անդարմանելի... Իրենց բոլոր ուժով հայերը պիտի քանդեն Թիւրքական իշխանութեան հիմքերը և մղեն այն դէպի կործանում... Երկու մեծ, զուտ ասիական խնդիրներ — Հայկականն ու Արաբականը — որ ննջում են ներկայ տագնապի միջոցին, վաղը պիտի արթնանան իրենց սուր, կատաղի ու շշմեցուցիչ կերպարանքով, եթէ ձեռք չ'առնուին լուրջ միջոցներ նրանց լուծման համար...

Բարդ է, տարաբախտաբար, այդ լուծումը, — մեր հայկական խնդրի լուծումը—գուցէ աւելի բարդ, քան ասիական արևելքի բոլոր միւս կնճիռները։ Եւ, ինչպէս մամուլը աղօտ կերպով ծանուցանում է, հակամարտութիւնն արդէն իսկ ծայր է աւել Կ. Պոլսի դեսպանաժողովի բանակցութեանց մէջ՝ մեր խնդրի առիթով։ Երբեմն անգլո-ռուսական էր այդ հակամարտութիւնը, այսօր՝ ռուս-գերմանական։ Երբեմն Անգլիան էր, լորդ Բիկոնսֆիլդի առաջնորդութեամբ, հզօր պատուար կանգնում օսմանեան երկրի ամբողջութեան, ընդդէմ ռուսական արշաւի. այսօր նոյն դերը ստանձնել է Գերմանիան, Վիլհելմ II-ի նախաձեռնութեամբ... Երբեմն Անգլիան էր Մոսկովի առաջխաղացութիւնը կանխելու համար, փաստաբանում „Թիւրքիոյ ընդհանուր ռէֆորմների" ծրագիրը, այսօր նոյն այդ տակտիկը որդեգրել է Գերմանիան։

Ժամանակը փոխուել է, սակայն, և Բեթման Հոլվեգ չի կարող գործադրել Բիկոնսֆիլդի ոճրագործ, աղետաւոր մեթոդը։ Գերմանիան չի կարող անտարբեր հանդիսատես մնալ Թիւրքիոյ բարբարոս ռէժիմի յարատևութեան հանդէպ, նա չի կարող չցանկալ և չնպաստել մասնաւորապէս Հայաստանի բարենորոգման, որ այսուհետև այնքան սերտ ու կենդանի առնչութիւն ունի գերմանական շահերի հետ։ Խաղաղ թափանցումի, տնտեսական և կուլտուրական նուաճումների վիթխարի ծրագիրներ է յղացել Գերմանիան Արևելքում և այդ

ծրագիրների իրագործման համար՝ նա պիտի փնտրէ ամենուրեք հայ ժողովրդի, գրեթէ միակ առաջադէմ, կուլտուրական տարրի, աջակցութիւնը։

Երբ դոքտոր Լեպցիուս ազդարարում էր գերմանական մի շարք գալոց ձեռնարկների մասին Հայաստանի մէջ — դպրոցական, զինուորական վերանորոգում ևլն — հաւանական է, որ նա իր անձնական ցանկութիւնը չէր ազդարարում, այլ իր հայրենի կառավարութեան իրական ծրագիրները։

Եւ որքան աւելի են շեշտւում Գերմանիայի այդ հայկական ծրագիրները, այնքան աւելի է յուզւում Պետերբուրգը, այնքան աւելի է վառւում ռուս կառավարութեան մէջ ցանկութիւնը՝ իր հերթին աշխատելու հայկական դատի համար, իր կողմը գրաւելու հայութեան համակրանքը։ Էջմիածնի, հայ դպրոցների դէմ ծայր տուող ինտրիգները եկան, իրաւ է, „փոքր ինչ“ պղտորելու հայ գիտակից մարդկանց տրամադրութիւնը. բայց և այնպէս հայ ժողովուրդը, մանաւանդ թիւրքահայը, տեղի թէ անտեղի, ամենավառ յոյսեր է կապել ռուսական հովանաւորութեան դրօշակի հետ. նա գիտէ յամենայն դէպս, որ Ռուսաստանը ստանձնել է նախաձեռնութիւն մեր դատի համար և որ նա այսօր եռանդով փաստաբանում է Ս. Պօլսում Հայաստանի ռէֆօրմների նախագիծը։

Միւս կողմից, արևմտեան մի մեծ պետութիւն — Ֆրանսիան — որ մինչև օրս արևելեան խնդիրների մէջ քայլել է միշտ իր դաշնակցի ետևից և որ ունեցել է Հայաստանում լոկ „սանտիմենտալ“ կարգի աւանդութիւններ, այժմից նա ևս բուռն կերպով շահագրգռուած է հայկական ռէֆօրմներով, քանի որ նրան է յատկացուած Բարձր Հայքի երկաթուղիների շինութիւնը, որ, ինչպէս բոլոր միւս կուլտուրական ձեռնարկները, պահանջում է իր արգասաւոր շահագործումների համար՝ երկրի կատարեալ անդորրացում, տեղական առևտրի ու արդիւնաբերութեան զարգացում, ժողովրդի նիւթական բարօրութեան մակարդակի բարձրացում, սպառողական կարողութեան աճում և ամենից առաջ՝ հայ տարրի բարգաւաճում։

Վերջապէս, այսօրուան Անգլիան չի կարող խաղալ 1878-ի „նենգաւոր Ալբիոնի“ դերը և Սիր Էդ. Գրէյ Բիկոնսֆիլդ չէ։ Նոր Կիպրոսեան դաշնագրութիւն, նոր զոհաբերում հայ ժողովրդի՝ „օսմանեան ամբողջութեան“ պաշտամունքին՝ այլ ևս անհնարին է ներկայ պարագաներում։

Հայաստանը պէ՞տք է բարենորոգւի. սա ընդհանուր, հրամայական կարգախօս է թէ պաշտօնական շրջաններում և թէ հանրային կարծիքի մէջ... Վերջապէս, կայ մի ազգակ, որ առժամապէս լուռ է, կրաւորական, սպասողական դիրքի մէջ, բայց որ կարող է — նոր ֆիասկօի պարագային — դուրս ժայթքել իր արդար բարկութիւնը յուսահատական ու փոթորկոտ ժեստերով... Դա ինքը հայ ժողովուրդն է։ Այդ ազգակն ևս հետզհետէ հաշուի կ՚առնեն... Խիստ յատկանշական է թիւրք կառավարութեան տենդային աճապարանքը՝ գոհացում տալու հայ պահանջներին, ուշադրութեան արժանի են, մասնաւորապէս, Վանի նոր վալիի մի շարք կոնկրետ քայլերը երկրի անդորրացման ճանապարհի վրայ։

Կացութեան բոլոր նշանները, այդպիսով, խրախուսական են, պայմանները ընդհանրապէս նպաստաւոր և հայ ժողովրդին ինում է — ի տեղի մատնելու անմիտ խուճապների և դիմելու յանցաւոր գաղթի — քիչ ևս համբերել և սպասել... այնքա՞ն տարիներ արեան ու սարսափների մէջ համբերելուց ու սպասելուց յետոյ։

Սակայն — սպասել պէտք է՝ ոչ թէ ծոյլ ու համակերպող կրաւորականութեան մէջ, որ միշտ եղել է մեծագոյն աղբիւրը հայկական աղէտների — այլ պէտք է աւելի քան երբևիցէ լարել բոլոր ճիգերը ինքնապաշտպանութեան այն փրկարար աշխատանքի մէջ, որ արդէն տալիս է կազդուրիչ արդիւնքներ և որի անհրաժեշտութիւնը ընդունում է անգամ թիւրք կենտրոնական կառավարութիւնը, ընդունում է և Վանի վալին։

Զվայե՞նք ռուս-գերմանական հակամարտութեան առիթով, որի հետևանքները այժմից դժուար է նախագուշակել, չնեռւինք պատանեկան յափշտակութեամբ այս կամ այն պետութեան գիրկը, չլինենք աւելի ռուսասէր, քան Սազօնովը, պահենք մեզ համար մեր համակրանքն ու հակակրանքը. գիւանագէտները թող առաջ տանեն իրենց բանակցութիւնները, իսկ մենք հսկե՛նք արթուն ու աչալուրջ երկրի մէջ, կրկնապատկենք մեր ճիգը, ամեն տեղ հոլովելով Ինքնօգնութեան միակ, գերագոյն և տիրական անհրաժեշտութիւնը։

ԱՆՅՈՅՍ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

Անօրինակ ճգնաժամ՝ է ապրում բուլգար ժողովուրդը։ Այսպիսի ցնցումներ չէր տեսել նա 1876-ի զարհուրելի օրերից ի վեր, երբ Բատակը — բուլգարական Սասունը — արիւնլայ և անօգնական՝ բառաչում էր Եւրոպայի ականջներին հազարաւոր խողխողուած դիակների միջից...

Այն ժամանակ հանդէս եկաւ մի Գլադստոն, որ իր պերճ ու հեղինակաւոր լեզուի բոլոր ուժով պաշտպան կանգնեց կոտորուող ժողովրդի և խարանեց սուլթանական բռնապետութիւնը։ Իսկ քիչ յետոյ հնչեց հիւսիսից մեծ ցեղակցի օգնութեան աղաղակը։

Հապա այսօ՞ր... Բախտի մի անողորմ դիմադարձութեամբ, ամբողջ Եւրոպան զզւանքով է լսում բուլգար անունը և գրեթէ այլ ևս չկան պաշտպաններ։ Պաղել է և ազատարար ցեղակիցը։

Եւ ահա Բուլգարիան — իսպառ մենակ, լքեալ իր ճակատագրին։ Երէկ նա „Բալկանեան Պրուսսիան“ էր, որ խրոխտ, իրաւացի հպարտութեամբ, համարում էր ինքզինքը ամենաուժեղ և ամենաբարգաւաճ պետութիւնը ամբողջ Թերակղզուն։ Երէկ նա իր հերոսական յաղթանակներով զմայլեցրել էր աշխարհը, քշել էր Թիւրքերին, գրաւել ամբողջ Թրակիան. ամիսների պաշարումից ու գոռ ճակատամարտներից յետոյ տիրացել էր օսմանեան երկրորդ մայրաքաղաքին։ Երէկ նա խիզախ, անդիմադրելի առաջխաղացութեամբ սպառնում էր Նոյնիսկ տիրանալ կ. Պոլսին և միմիայն ցարի վճռական veto-ն էր, որ արգելք եղաւ ու ամբողջ ամիսներ դատապարտեց բուլգարներին կանգնել Չաթալջայի ամրութիւնների առջև։ Երէկ, վերջապէս, ամբողջ Բուլգարիան ցնծում էր եզակի յաղթանակների գինովութեան մէջ, յաղթանակներ՝ որոնք այնքան գիւրացրել էին և յոյն ու սերբ բանակների առաջխաղացութիւնն ու նուաճումները։

Իսկ այսօր՝ բուլգար բանակը ջարդ ու փշուր, 30,000 ամենաընտիր երիտասարդներ կոտորուած մարտադաշտերում, 50,000 վիրաւորներ ու հաշմանդամներ և... արդիւնքը—համեմատաբար այնքա՞ն չնչին... Մակեդոնիան՝ նրա տիրապետութիւնից խուսափած, Ադրիանուպոլիսը ձեռքից ընկած և բուլգարական հողերի մի պատկառելի տարածութիւն՝ անցած դրացի ռումէնի ձեռքը... մինչդեռ յոյնն ու սերբը գրեթէ կրկնապատկեցին իրենց հողերն ու բնակչութիւնները, այն յոյնը, որի վրայ արհամարհոտ բարձունքներից էր նայում բուլգարը, այն սերբը, որին նա այնպէս անողորմ ծեծել էր 1885-ին... Իսկ այժմ ծեծուածը ինքն է, ծեծողը՝ այդ յոյնը և այդ սերբը... Այդ է սարսափելին, բուլգարական ինքնասիրութեան համար չի կարող լինել աւելի ծանր ու զգալի հարուած...

Հէնց այդ հիւանդոտ ինքնասիրութիւնն էր, որ միացած մի անհանդուրժելի ամբարտաւանութեան հետ՝ անգունդ գլորեց երէկուայ յաղթական Բուլգարիային։ Նա ջարդել էր տաճկին և կարծում էր, թէ աւելի ևս գիւրութեամբ պիտի ջարդէր յոյնին, սերբին։ Նա առել էր Կրխ-Քիլիսէն իր սուիններով ուժով, արժանացել էր ամբողջ աշխարհի ծափերին, անմահացրել իր անունն ու զինուորական հանճարը համաշխարհային պատմութեան մէջ և այնքան էր արբել այդ ծափերով ու ովսաննաներով, որ մտածեց—մի չարաշուք, իրեն համար եղերական օր—պատերազմ յարուցանել երէկուայ զոյգ դաշնակիցների դէմ, Մակեդոնիայի վաղուց փափագած հողերին տիրանալու համար։ Մոռացել էր, որ բուլգար զօրքը անօրինակ ճիգերից յետոյ հիւծուել էր, ուժասպառուել։

Եւ գրգռեց յանցաւոր, եղբայրասպան պատերազմը, որ սկզբից իսկ ձախորդ եղաւ իրեն համար, աղէտաբեր. պարտութիւնից-պարտութիւն՝ նա նետուեց անկման խորխորատները, ուր կատաղութեան փրփուրը բերնին՝ բուլգար սպաներն ու զինուորները... վ.էժինդիր եղան ամեն քայլափոխում խաղաղ ազգաբնակութիւնից, նիւթեցին մի շարք բարբարոսութիւններ *). Ընկան քաղաքակիրթ աշխարհի աչքում, բուլգար անունը ընդմիշտ վարկաբեկուեց...

Իսկ մինչ այս մինչ այն, Թիւրքերը, տեսնելով Ադրիանուպոլիսը գրեթէ պարպուած բուլգար զօրքերից, շտապեցին վերստին գրաւել իրենց սրբազան մայրաքաղաքը, ուսկից բնաւ յոյս չկայ դուրս մղելու նրանց։

Ահա այդպէս օգտուեց բուլգարը իր փայլուն յաղթութիւններից։ Գործեցին անօրինակ, անընդունելի վրիպումներ, իրենց դէմ տրամադրեցին և Ռուսաստանը—որ ցարի բերնով նախազգուշացրել էր Բուլգարիային եղբայրասպան պատերազմի հետևանքների մասին — և գրեթէ բոլոր պետութիւնները։

Ո՞վ է ճշմարիտ յանցաւորը, պատասխանատուն այդ թեթևամիտ և մահաբեր վրիպումների համար... Դանէ՞վ, Սավով, Գերդինա՞նդ... Ո՞վ։ Երբէք էլ չի իմացուի։ Բայց հազարաւոր բուլգար գիւղացիներ ու արհեստաւորներ իրենց գլուխը դրին այդ եղերական սխալների մէջ... Ժողովուրդը—յաւիտենական նահատակը, քաւութեան նոխազը—գուցէ երբէք էլ չի իմանայ, թէ ինչո՞ւ և ինչպէ՞ս կատարուեց այդ հրէշաւոր և անպատիւ ոդբերգութիւնը։ Մի վայրկեան կար, երբ լուր բերին, թէ ժողովրդային ցասման ալիքը մօտ օրերում յորձանք կը տայ և կը խորտակէ արքայական գահը, կը սրբէ նրա հետ զինուորական անպատասխանատու կաստը և կը սահմանէ հանրապետութիւն... Հշուկ էր միայն, Բուլգարիան չունի տակաւին 1871-ի Ֆրանսիայի հասունութիւնը...

***

Ոչ մի տարակոյս — Բուլգարիան երբէք չի հաշտուի այդ կացութեան հետ, նա չի մոռանայ իր անմանյաղթանակները, ոչ էլ իր կրած պարտութիւնները։ Ահա թէ ինչու Բուխարեստի մէջ կնքուած հաշտութիւնը երերուն է, անոյշ։ Յաղթուածը համակերպեց, ատամները կրճատելով, վրէժը սրտի մէջ։ Նա շուտով վերստին կը հաւաքէ ուժերը և կազդուրելով նորէն կը նետուի կրկէսի մէջ...

Ադրիանուպոլսի կորուստը չի մարսի բուլգարը, բայց աւելի ևս չի մարսի Մակեդոնիայի կորուստը։ Քսան տարուց ի վեր բուլգար ժողովուրդը այնքա՞ն թանկագին զոհեր է աւել այդ իր փայփայած Մակեդոնիայի

*) Գազանութիւններ նիւթել են, անշուշտ, նաև յոյներն ու սերբերը։ Բայց բուլգարական սարսափների ծաւալը ըստ երևոյթին աւելի մեծ է։

համար, որի բնակչութեան ահագին մասը իր արիւնակից եղբայրներն են։ Քսան տարուց ի վեր Սարաֆօվներ ու Դելչեվներ այնքան նիզակներ են ճօճել այդ երկրի մէջ, այնքան բուլգար հերոսներ են իրենց արիւնով ոռոգել այդ հողը, ուր սակայն յոյնն ու սերբը ազատագրական ոչ մի ճիգ չեն ի գործ դրել, ընդհակառակը հանդիսացել են յաճախ լոկ գործիք սուլթանական դահիճների ձեռքում՝ ընդդէմ բուլգար չէտաների...

Եւ այժմ տեսէք այդ այլանդակ խաղը ճակատագրի... Մակեդոնիան, թիւրքերի ձեռքից խլուած, ազատագրուած Մակեդոնիան, գրեթէ ամբողջապէս պիտի վայելեն յոյնն ու սերբը։ Ինչպէ՞ս մարսէ այդ բուլգարը...

Աղէտաբեր է յաղթուածի համար մանաւանդ Ռուսաստանի այդ կոպիտ volte-face-ը։ Պետերբուրգը սկզբներում յոխորտաց թիւրքերի դէմ, որոնք գալիս էին վերստին գրաւելու Ադրիանուպոլիսը։ Բայց պատօնական յոխորտանք եղաւ։ Թիւրքերը եկան նստեցին, Ռուսաստանի բողոքի շանթերը միշտ աւելի մեղմացան և այսօր բնաւ չեն լսուում։ Նա սպառնում էր արշաւել դէպի Հայաստան, զինուորական ցոյցեր սարքել ուրիշ տեղեր, սակայն, Բերլինն էլ ցոյց տուեց իր սպառնական մատը Պետերբուրգի վարիչներին և սրանք իսպառ համակերպեցին։ Ադրիանուպոլսի խնդիրը դարձաւ զուտ թիւրք-բուլգարական մի խնդիր, և նա կը լուծուի, հարկաւ, ոչ ի նպաստ բուլգարների։ Թիւրքիան ցնծում է իր այնքան ուժան յաղթանակով...

Երկա՞ր կը տևէ արդեօք այդ ցնծութիւնը... Նոր ուժգնպներ չպիտի՞ պայթին մօտ ապագայում իսկ՝ „հիւանդ մարդու“ ասիական երկրամասերում, ուր հևիհև արշաւում են այսօր եւրոպական կապիտալիզմի աւարատենչ բազէները... Ի՞նչ են այդ „երկաթուղային մրցումները“ ասիական Թիւրքիոյ մէջ, եթէ ոչ նախադուռ քաղաքական մի մեծ փոթորկի ու վերիվայրումի՝ որ, դժբախտաբար, դառնում է միշտ աւելի ճակատագրական ու անխուսափելի, քանի որ ինքը Թիւրքիան մի կոյր ու տենդային սլացքով դիմում է արդէն դէպի այդ վերջնական ու կորստաբեր ճգնաժամը։

ԳՈՐԴԵԱՆ ՀԱՆԳՈՅՑ

Որքան աւելի են քրքրում արևելեան մեծ հանգոյցը, որքան աւելի են ձգտում մօտենալ նրա վերջնական լուծումին, այնքան ասես աւելի է նա բարդանում ու խճճուում։ Հին արիւնոտ կնճիռներին նորերն են աւելանում, աւելի ծանր ու դժուարալոյծ։ Ցունաստանի առաջխաղացութիւնը, նրա յանկարծակի, լայն ծաւալումը սրում է արդէն նրա ախորժակը, թևաւորում նոր երազներ ու ծրագիրներ... նաև Ասիական Թիւրքիոյ գալոց ժառանգութեան վերաբերմամբ։

Հելլենական շովինիզմը թափ է առնում և ոմանք արդէն նախատեսնում են երչանիկ օրը, երբ Բիւզանդի կորսուած թագը պիտի վերադառնայ յոյներին, երբ յունական դրօշը 5 դարու արհամարհուած գոյութիւնից յետոյ պիտի վերստին ծածանէ Այա Սօֆիայի գմբէթին...

Ուշագրաւ երևոյթ է, որ յոյն ազգաբնակութեան ահագին մեծամասնութիւնը ապրում է յոյն պետութիւնից դուրս, անգամ այսօր, երբ այդ պետութեան սահմանները այնքան ընդարձակուել են, գրաւելով հելլենութեան ահագին զանգուածներ։ Փոքր Ասիոյ մէջ է մնում այդ ժողովրդի մեծամասնութիւնը։ Եւ բնական է, որ այսուհետև, երբ Ցունաստանը այնքան ուժեղացաւ Բալկաններում, նա պիտի քարշէ դէպի իր ծոցը Փոքր Ասիոյ միլիոնաւոր հարազատներին, որոնք, ինչպէս այդ բազմաթիւ կղզիները, տարերային ուժով ձգում են դէպի մայր-պետութիւնը։ Որքան աւելի զօրանայ այդ վերջինը և որքան աւելի տկարանայ Թիւրքիան, այնքան աւելի ծանր ու սպառնալի բնոյթ պիտի առնէ յոյն գաղութների մեծ խնդիրը։

Այդ խոշոր հանգամանքի վրայ է, որ Եւրոպայի ուշադրութիւնն է հրաւիրում Temps-ի ամենալուրջ թղթակիցներից մինը։ Նա ասում է, որ դեռ շատ վաղ է՝ լուծած հռչակել Օսմանեան Արևելքի հանգոյցները։ Եւ նա ծանրանում է թիւրքական Ասիայի երեք ամենամեծ ու ամենավտանգալի խնդիրների վրայ.

1. Արաբական խնդիր։
2. Հայկական խնդիր։
3. Փոքր Ասիոյ յունական խնդիր։

Հայերը, ասում է պարիզեան թերթի թղթակիցը, պիտի քանդեն անդադար օսմանեան կայսրութեան հիմքերը, իբրև անհաշտ թշնամիներ թիւրքական տիրապետութեան... Հայկական հաւատարմութիւն ոչինչ է թիւրքիոյ հանդէպ, իւրաքանչիւր հայ երդուեալ թշնամի է թիւրքին և հայերը կազմում են շատ տեղերում հոծ զանգուածներ... Ուստի հայկական հարցը հանդիսանում է ամենածանրակշիռ խնդիրներից մինը Ասիական Թիւրքիայում։

Արաբիան—դուրս, Հայկական վիլայէթները—դուրս... Էլ ի՞նչ է մնում Թիւրքիայից։

Անատոլո՞ն... Բայց այնտեղ էլ պիտի ծառանայ շուտով յունական խնդիրը։ Հելլենիզմը, ուժեղ, բարգաւաճ և յարաճուն՝ կ'առաջադրէ վաղ թէ ուշ իր իրաւունքներն ու պահանջները։ Մի միայն Պօլսում յոյների թիւն է մօտ 500,000 և 180,000 Զմիւռնիայում։ Փոքրասիական եզերքները, բոլոր նաւահանգիստները լեցուն են յոյներով. և նրանք գրեթէ ամենուրեք անեղծ պահպանել են իրենց լեզուն, կրօնը, բարքերը և առաջնակարգ տեղ ունին առևտրի, նաւարկութեան, արդիւնաբերութեան մէջ։

Ցեղ-տեղ միայն, ինչպէս Կապադովկիայում ու Կիլիկիայում, յոյները գրեթէ իսպառ ձուլուած են Թիւրքերի հետ, լեզուով, բարքով։ պահպանել են միայն իրենց կրօնը։ Գործածում են նոյնիսկ արաբական այբբէն, յունականի տեղ։

Բնականաբար, այսուհետև այդ կորած, օտարացած տարրերն ևս կը ձգտին վերադառնալ մայր-զանգուածի գիրկը, ինչպէս որ կը վերադառնան Թիւրքացած ու քրդացած հայերն ևս դէպի հայութիւն։ Նոր յոյն սերունդը սկսում է արդէն յաճախել յունական դպրոցները...։ Վերածնութիւնը կը կատարի բնականօրէն, անհրաժեշտօրէն։ Սամսօն — Սրվազ — Կեսարիա — Խարբերդ երկաթուղային գիծը նոր զարկ կը տայ հելլենիզմի այդ վերածնութեան։

Եթէ չլիներ Ադանայի կատաստրոֆը, Կիլիկիոյ հայ տարրը դեռ կարող էր թերևս նեցուկ լինել Երիտասարդ Թիւրքային ընդդէմ առաջացող հելլենիզմի։

Ի՞նչ կը լինի ապագան... Ի՞նչ դիրք կը բռնեն Փոքր Ասիոյ երեք միլիոն յոյները մայր-հայրենիքի այս յաղթական պատերազմներից յետոյ... Պիտի կարողանան արդեօք Թիւրքերը իրենց փոքրամասնութեամբ պահպանել հեգեմոնիա, գերիշխանութիւն ահագին երկրի մէջ՝ հանդէպ այդքան զօրաւոր թշնամիների...

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶԱՐՀՈՒՐԱՆՔՆԵՐԻՑ

(«ՌՈՒԼԳԱՐԱԿԱՆ ՍԱՐՍԱՓՆԵՐ»)

Վաղն էլ անշուշտ կը խօսեն „յունական“, „սերբական“ սարսափների մասին, երբ անաչառ հետազօտողները կերթան տեղնուտեղը քննելու և երևան հանելու ճշմարտութիւնը։

Արդէն իսկ ընտրուած են միջազգային քննիչ յանձնաժողովներ։ Նրանց քննութեան արդիւնքը կը պարզէ մի աւելորդ անգամ յաչս լուսաւոր մարդկութեան, թէ ինչե՞ր կարող է նիւթել յաւիտենական ու անպարտելի Մարդ-Գազանը և թէ որքան հրէշաւոր, անբարոյական երևոյթներ կարող է ծնել պատերազմը, անգամ երբ նա հրատարակւում է յանուն ճնշուած ցեղակիցների ազատագրման։

Ահաւասիկ մի քանի տեսարաններ այդ պատերազմի սարսափներից, որոնք դժուար թէ լինին յօրինուած կամ չափազանցուած և որոնք այնքան յիշեցնում են հայերի դէմ ի գործ դրուած Թիւրք-Համիդեան բարբարոսութիւնները։

Զոհերը այժմ մեծ մասամբ մահմեդականներ են, խողխողուած բուլգար չէտաների ու զօրքերի ձեռքով։

Աթէնքի հմայալարանը հրատարակել է մի բրոշիւր, որի մէջ ամփոփուած են արիւնոտ վաւերագիրներ։ Գրուած են նրանք ոչ յոյների, այլ օտար վկաների ձեռքով։

Ամբողջութիւնը մի սոսկալի մեղադրական է բուլգարների դէմ։

Ահա մէկը ականատեսներից, մի Ֆրանսիացի, Հ. Գ. Միշել.

Կուրկուտի մէջ, ասում է նա, մի բուլգար ասպատակախումբ Դօնչեվի առաջնորդութեամբ փակում է մզկիթի մէջ շրջանի բոլոր տղամարդկանց և հրաւիրում է բոլոր կանանց մզկիթի շուրջը, որպէս զի ականատես լինին կատարուելիք տեսարանին։

Ապա խումբը նետում է երեք ռումբ մզկիթի վրայ, որոնք սակայն չեն պայթում։ Այն ժամանակ կոմիտաջիները հրդեհում են մզկիթը և ներսի ամբողջ բազմութիւնը, մօտ 700 հոգի, կրակի ճարակ են դառնում։ Ով որ փորձում է փախչել հրացանազարկ է լինում։ Դէպքից յետոյ փողոցներում թափթփուած էին մարդկային ածխացած գլուխներ, ձեռք ու ոտքեր և այլն։

Պլանիցայի մէջ՝ նոյն Դօնչեվի խումբը աւելի սոսկալի բարբարոսութիւններ է նիւթել։ Նախ բոլոր տղամարդիկ փակուել են մզկիթի մէջ և կենդանի այրուել. ապա հաւաքել են բոլոր մահմեդական կանանց, որոնք իրենց հարազատների նահատակութեանը ականատես լինելուց յետոյ, նոյնպէս խմբովին այրուել են հրապարակի վրայ։

Սալոնիկի աւստրիական ընդհանուր հիւպատոսը հեռագրում է միևնոյն ժամանակները իր կառավարութեան, որ իտալական հիւպատոսի հետ Սերբես քաղաքը գնալով, տեսել էր այնտեղ միմիայն „ծխացող մոխրակոյտեր“։ Նոյնն են վկայում եւրոպական բոլոր մեծ օրգանների թղթակիցները։

Secolo-ի թղթակիցը գրում էր այդ թերթին.

Մեծ պետութիւնների հիւպատոսները Սալոնիկում հաւաքել են մանրամասն տեղեկագիրներ Մակեդոնիոյ և Թրակիոյ ջարդերի մասին։ Իմ անձնական քննութիւնը թոյլ է տալիս ինձ պնդել, որ կոտորուած են մօտ երկու հարիւր հազար (200.000) մահմեդականներ, անզէն մարդիկ, կանայք, ծերունիներ և երեխաներ—բալկանեան պատերազմի առաջին ամիսներում։ Եւրոպական պետութիւնները անտարբեր էին դէպի մահմեդականների այդ մասսային կոտորածը և այդ հանգամանքը քաջալերեց բուլգարներին ու նրանք սկսեցին այնուհետև կոտորել յոյներին։

Երէկուայ շէն ու բարգաւաճ Սերբեսի մէջ 6000 անից 4000-ը և լաւագոյնները հրդեհուած են, 4000 մագազիններ՝ կողոպտուած ու այրուած։

Ահա վերջապէս Մոսկուայի „Ուտրո Ռոսսիի“ մեծ լրագրի թղթակիցը, որի վկայութիւնը դժուար թէ լինի աչառոտ ու անհիմն.

Դրամա քաղաքից մի 10 կիլոմետր հեռու—ասում է նա—մենք տեսանք Դօքսատոի աւերակները։ Ցոյն քաղաք է, երէկ դարձեալ բարգաւաճ, այրել են նոյն բուլ-

գարները։ Երեք ժամ անդադար ռմբակոծելուց ու հրդեհելուց յետոյ, սկսում են կոտորածը. հրաւիրում են նաև բոշաներին՝ մասնակցելու խրախճանքին։ Զարհուրելի ջարդ են սարքում յոյների մէջ։ Հարիւրաւոր անմեղ մարդիկ խողխողւում են... Կանայք ողբում էին ծայրագոյն յուսահատութեան մէջ։ Ցեսայ երեխաներ, վիրաւորուած սուիններով։ Ցեսայ մի պառաւ կին, որ անմխիթար հեծեծում էր, իր հինգ զաւակները չգտնելով։ Դօքսատօի ազգաբնակութեան կէսը անհետ չքացել է։

Այդ զարհուրելի տեսարանները ծանր տպաւորութիւն էին արել վրաս—ասում է ռուս թղթակիցը — և ես իմ ամբողջ ուղևորութեան ընթացքում անասելի ամօթ էի զգում՝ որ այդ անորակելի վայրենութիւնները կատարւել են սլաւների ձեռքով։

ՊԱՏՄԱԿԱՆ

XIV

ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Հայկական խնդիրը Վարժապետեանի օրով. — Թիւրքամոլ շրջաբերականը. — Պատասխանատուներ. — «Թիւրքասէր» եւ ռուսասէաց հոսանքը տանկանայ հասարակութեան մէջ. նրա պատճառները. — Հայ հրեսխոյներեր հառեր օսմանեան առաջին պարլամենտում. — Ռուսասիրութիւնը զաւառական ժողովրդի մէջ.—«Հիմէթի հիւրիւմէթ».—Ազգային խաղաղասիրութեան երեք շրջաններ. — Սան-Ստէֆանօ եւ յուսահատութիւն.—Դէպի Բերլին. — Հայկական ագիտացիա Լօնդոնում.—Մի սանազանգ՝ Վեհաժողովի նախօրեակին.—Այն ժամանակ եւ այսօր.—

—

Խրիմեանից յետոյ—Վարժապետեան։

„Հարստահարութիւնների Տեղեկագիրը“ մի քանի տարի արշիւներում մրափելուց յետոյ՝ վերստին հանդէս եկաւ 1876-ին, Ներսէսի պատրիարքութեան օրով։

Տարին հարուստ էր քաղաքական անակնկալներով ու փոթորկալի դէպքերով։ Թիւրքիան նորէն ապրում էր իր գոյութեան օրհասական վայրկեաններից մինը։ Ապըստամբութիւնը պայթել էր Բալկաններում և „Մոսկովի“ ուրուականը սպառնագին ցցւել էր Հոգեվարքում Մահիկի դիմաց։ Փոթորիկը պայթել էր—և ներսում։ Պալատական մի արիւնոտ յեղաշրջումով Աբդիւլ Համիդ բազմել էր սուլթանական գահի վրայ, յաջորդելով իր եղբայր Մուրադին։ Եւ դիպլոմատ, չարահանճար խալիֆը, երկրի ղեկին տիրանալով, սկսել էր արդէն ի գործ դնել իր դիւային հնարքները՝ թէ արտաքին և թէ ներքին տագնապներին դիմագրաւելու համար։

Ռուսական վտանգը չքացնելու նպատակով՝ նա նեռեց Եւրոպային մի հանդիսաւոր ազգարարութիւն, որով խոստանում էր անյապաղ իրագործել „ընդհանուր ռէֆորմներ“ ամբողջ կայսրութեան մէջ։ Նա դրդեց միաժամանակ յոյներին ու հայերին՝ նոյնպէս ասպարէզ գալ իրենց ուրոյն ազգային պահանջներով՝ հանդէպ սլաւ ցեղերի, որ պարզել էին ապստամբութեան դրօշը։ Նա ղրկեց, վերջապէս, եւրոպական դահլիճներին պատճէնը „Օսմանեան Սահմանադրութեան“ (1876 թ. դեկտեմբեր), որ մի նոր դարագլուխ էր ազգարարում Թիւրքիոյ համար, „նոր հաստատութիւններ, հիմնուած ազատութեան, արդարութեան ու հաւասարութեան վրայ“...

Բ. Դրան այդ խաբեբայ ազգարարութիւնները „ընդհանուր ռէֆորմների“ մասին հետամուտ էին երկու նպատակի.

1) „Թող փչել եւրոպական պետութիւնների աչքին.

2) Բաժանել, հակադրել իրար թիւրքահպատակ քրիստոնեայ ազգութիւնները, սլաւների դէմ հանել հայերին ու յոյներին, շահել վերջինների համակրանքը և մօտալուտ պատերազմի համար՝ ձեռք բերել նրանց սիրայօժար գործակցութիւնը։

Առաջին նպատակից նա վրիպեց, իսկ վերջինը իրագործեց վարպետօրէն։ Յոյները արդէն տրամադրուած էր սլաւների դէմ, թիւրքը շահեց և հային։

Հայոց պատրիարքը—Ներսէս Վարժապետեան—որ Խրիմեանից ստացել էր Հայկական խնդիրը, իբրև մի սուրբ ու արիւնոտ ժառանգութիւն, որ եղել էր նախագահը Հայաստանի հարստահարութեանց Քննիչ Յանձնաժողովի, որ քանիցս ցոյց էր տուել ըմբոստ ոգի թիւրքական ռէժիմի հանդէպ՝ հրապարակ եկաւ յանկարծ մի արտառոց կոնդակով—ուղղուած հայ ժողովրդին—ուր պարզապէս խունկ էր ծխում օսմանեան կառավարութեան և գրգռիչ, թշնամական ակնարկներ էր նետում Ռուսաստանի հասցէին.

Այն օրէն ի վեր — ասում էր այդ կոնդակը — որ հայոց ազգին ամենամեծ մասն օսմանեան հզօր տէրութեան հպատակաւոր քաղցր հովանուն ներքոյ մաւ, իր հինգ դարուց պատմութիւնը կը ցուցնէ թէ ինչ մեծամեծ շնորհներ իրեն պարգեւած է այս հզօր տէրութիւնը։ Եթէ այսօր Թիւրքիոյ մէջ կը տեսնենք հայ ազգը, որ կը պահէ իր կրօնը, իր եկեղեցին, իր լեզուն, իր պատմութիւնն ու աւանդութիւնները և վերջապէս եթէ այսօր հայ ազգը կըզգայ իր էութիւնը, նոյն բարեխնամ տէրութեան շնորհաց արդիւնք են...

Ստոյգ է թէև, որ հայ ազգը մերթ ընդ մերթ գաւառներու մէջ բարեխնամ տէրութեան կամաց հակառակ, հարստահարութեանց ենթակայ եղած ալ է, հարստահարութիւնը, որոնք միայն մարմինը կը վնասեն և հեռի են այն տեսակ հարստահարութիւններէն, որոնք ոգին և մարմինը միանգամայն կը վնասեն և ազգին գոյութեանը կըսպառնան, սակայն վերջին օրերս ձեռք առնուած միջոցներով... Մեծ յոյս ունինք, որ այնպիսի մասնաւոր ճնշման ու տնկարգութեանց ալ հիմնական բարեկարգութեամբ առաջքը պիտի առնուի...

Արդ՝ հայ ազգն... չի կրնար անտարբեր մնալ օսմանեան տէրութեան դտնուած արդի ծանրակշիռ պարագայից մէջ, այլ պարտաւոր է... անկեղծ օժանդակութիւն մատուցանել... Օսմանեան երկիրը պաշտպանել՝ Հայաստանը պաշտպանել ըսել է, նոյնիսկ հայուն կրօնը, դպրոցը, ինչքը, տունը, ընտանիքը և պատիւն ու կեանքը պաշտպանել ըսել է *)...

*) „Մշակ“, 1876 թ. № 33։

Ահա էական յայտարարութիւնները այդ ծանօթ շրջաբերականի։ Դա առաջին օղակն էր եղերական „շղթայի“... Ցախուռն, անյար (incohérent), հակասական ձեռնարկների մի շղթայ՝ որ ձգւում է այդ տխուր կօնդակից մինչև Բերլին և այնտեղից—վիժման անդունդ... Հետապնդենք, սակայն, մեկնաբանել և ճշտել։

Այն ժամանակւայ և յետագայ հայ պատմական քննադատութիւնը, ի դէմս մի շարք գրողների, դատափետեց Վարժապետեանին ամենածանր մակդիրներով։ „Դաւաճան“ բառն իսկ չխնայեցին նրա հասցէին։ Զատփազանցութիւնն, անտարակոյս, մեծ բաժին ունի այդ յախուռն գնահատումների մէջ։ Ոմանք իսկապէս զատեցին անձը միջավայրից և առաջինի վրայ բարդեցին պատմական իրողութիւնների բովանդակ պատասխանատուութիւնը։ Սխալ մեթոդ և անարդար։ Անարդար մասնաւորապէս Վարժապետեանի նկատմամբ, որ իր բոլոր թերութիւններով հանդերձ՝ նոր, „երիտասարդ Հայաստանն“ է մարմնացնում իր ըմբոստ ու անընկճելի խառնուածքով, իր գործօն և անձնազոհ արիութեամբ, այն Վարժապետեանի՝ որ ընդունակ էր ձեռնոց նետել օսմանեան բռնապետին և պատասխանել նրա սպառնալի պահանջներին.

— „Աւելի շուտ ես կը համաձայնիմ կախւիլ պատրիարքարանի դրան վրայ, քան թէ յետ կոչել հայկական պատգամաւորութիւնը Բերլինից“։

Անշուշտ, երիտասարդ, քաղաքականապէս անփորձ պատրիարքի անձնաւորութիւնը, նրա սուբ'եկտիվ շունչը, նրա վառվռուն ու ոստոստուն տեմպերամենտը իրենց դերն ունին այդ բոլոր ձեռնարկների, նաև այս առաջին թիւրքամոլ և հակառուս կօնդակի յղացման ու խմբագրութեան մէջ։ Ներսէսին մենք տեսնում ենք դեռ 1865-ի Ազգային Ժողովում Ռուսասանի դէմ թունոտ խօսքեր արտասանելիս։ Ռուսական ռէժիմի գանձգութիւնները հայ եկեղեցու, կրօնի, լեզուի, ազգայնութեան դէմ, ռուսացման յամառ ու սիստեմատիկ ձգտումները այնքան խորն էին խոցոտում հայրենասէր և ջերմօրէն լուսաւորչական Ներսէսին, որ նա դրա հանդէպ մի վայրկեան պատրաստ էր ջատագովել օսմանեան ռէժիմը, պատրաստ էր նոյնիսկ—տրամաբանութեան կանոնները ոտնահարելով և կրօնական մետաֆիզիկային իր տուրքը հատուցանելով—յայտարարել, որ թիւրքական իրաւակարգը այն պատճառով է գերադասելի, որ նա հայի „մարմինը միայն վնասելով“, հոգին ազատ, անվնաս կը թողնէ, ուրիշ խօսքով—ըստ Ներսէսի — ֆիզիկական բնաջնջման գերեզմանոցում հայ „հոգին“ ու „ազգայնութիւնը“ դեռ կարող են ապրել ու բարգաւաճել...

Սակայն, Ներսէս միահեծան ու անպատասխանատու հեղինակը չէ այդ թիւրքասէր և ռուսատեաց ծանուցումների։ Նա ինքն ասում է նոյն կօնդակում, որ խորհրդակցել է Ազգային Վարչութեան խառն Ժողովի հետ։ Թիւրքասիրութեամբ և ռուսատեցութեամբ համակւած էր գրեթէ ամբողջ թիւրքահայ հասարակութիւնը, նաև գիտակից գաւառացիք, ինչպէս կը տեսնենք քիչ յետոյ։ Հայ գաւառական երեսփոխանների ճառերից՝ թիւրքիոյ առաջին պարլամենտում։ Թիւրքահայ élite-ի ռուսատեցութիւնը—որ Սան-Ստեֆանոյից յետոյ միայն սկսեց մեղմանալ—նոյնքան և գուցէ աւելի անկեղծ էր, քան նրա թիւրքասիրութիւնը։ Երկգլխեան հզօր արծիւը, որ սեղմել էր իր բռնաւոր ճանկերի մէջ մի բուռն ցեղակիցներին, աւելի ևս ահարկու, վտանգաւոր էր թիւրքահայ մտածողի տանջկոծ երևակայութեան մէջ, քան թիւրքը և քիւրդը։ Թիւրքահայը չէր մոռացել Ներսէս Աշտարակեցու և կովկասահայոց վարած մեծ ճակատամարտները յօգուտ ռուսական տիրապետութեան—և նոյնքան մեծ յուսախաբութիւնները։ Դեռ թարմ էին յուշերը Միքայէլ Նալբանդեանի եղերական նահատակութեան՝ Պետրոպաւլովսկի զնդանում. հայ վաղամեռ բանաստեղծի անունը բերնէ բերան հոլովւում էր Կ. Պոլսում ու այլ հայկական կենտրոններում, նրա նկարը բազմաթիւ օրինակներով ցուցադրւում ու վաճառւում էր պոլսահայ գրախանութներում, ցուցադրւում էր, իբրև մի տեսակ սէնբօլ, խորհրդապատկեր զուտ ռուսական, ինկվիզիտորական հալածանքի...

Այնպէս որ, երբ թիւրքահայոց հոգևոր պետը, ռուս-տաճկական պատերազմի նախօրեակին, խորհրդակցելով ազգային պատշաճ մարմինների հետ, հրատարակում էր յանուն թիւրքահայ ժողովրդի իր լոյալ (loyal) հպատակութեան և „օսմանեան հայրենասիրութեան“ հրովարտակը, — նա անում էր այդ՝ ոչ թէ միայն երկիւղի, „փոլիթիկի“, խոհեմութեան նկատումներով, ոչ թէ միայն այն պատճառով, որ պատերազմի ելքը անորոշ էր, որ հայերի թշնամական կամ նոյնիսկ փոքր ինչ պաղ ընթացքը կարող էր կատաղեցնել իշխանութիւնը, գրգռել մահմեդական խուժանները և աղէտներ յարուցանել, այլ նա անում էր իր թիւրքասէր, ամենահպատակ ծանուցումները և այն պարզ գիտակցութեամբ՝ որ օսմանեան ռէժիմը իր բոլոր արատներով հանդերձ՝ նրա աչքում գերադասելի է ռուսական ազգայնակուլ տիրապետութիւնից։

Զմոռանանք մանաւանդ այն, որ պոլսական մթնոլորտը տոգորւած էր այն ժամանակ „ռէֆորմի“ զրոյցներով, որ „երիտասարդ Թիւրքիան“ պատրաստում էր արդէն իր ցնցող թատերամուտը, որ պետութեան ճակատագիրը ղեկավարում էր Միթհադ փաշան, որ հայազգի Օտեանը նրա ինտիմ խորհրդակիցն էր և նրա աջ բազուկը, որ նոյն Գրիգոր Օտեանը միաժամանակ հայ հասարակութեան և հայկական ճակատագրի ղեկավարներից մինն էր, որ ուրիշ հայ կառավարական պաշտօնեաներ ևս մասնակցում էին Ազգային Ժողովի նիստերին, տալիս էին շարունակ իրենց հրահանգները, տրամադրում

էին մաքերը ի նպաստ օսմանցիութեան և այլն, և այլն։

Միջավայրի, շրջապատի և պատմական վայրկեանի այդ բոլոր տեսակները ուշադրութեան առնելով, մենք չափազանց և ծայրաբեղ պիտի գտնենք մի շարք քննադատութիւններ ու ամբաստանութիւններ, որ տեղացել են Վարժապետեանի հասցէին, նրա համբաւաւոր կօնդակի առթիւ, որի գլխաւոր պակասութիւնը՝ իր ձևն է, իր անզգոյշ ու անտակտ ոճը, յատկանիշ մի խակ, միամիտ, անշրջնկատ խմբագրութեան։

Գրիգոր Արծրունին պարզապէս անուանում է այդ կօնդակը „խայտառակ և ամօթալի“։ Նա խօսք չէր գտնում իր զզուանքն արտայայտելու Ներսէս պատրիարքին.

Այո՛, ասում է նա, դա յատկանիշ է ամենաստոր, ամենաանբարոյական, ամենալիրբ կղերականութեանը *)...

Արծրունուն ամենից աւելի հրում է այն հանգամանքը, որ հայ լուսաւորչական հովիւը գերադասում է մահմեդական տիրապետութիւնը քրիստոնէականից (ռուսականից).

Մենք միշտ համոզուած էինք — ասում է նա չակաւոր հրապարակախօսը իր փոքր ինչ կոշտ բառբառով — որ... միայն քրիստոնէութեան միջոցով կարելի է մարդկութեանը հասնել լայն, ընդարձակ, բարոյական, հասարակական և քաղաքական զարգացմանը **)...

Ներսէս, կրկնում ենք, հնազանդւել է իր շրջապատից ու քաղաքական վայրկեանից ստացած մղումներին։ Ցաւալի է, այո, 1876-ի պատրիարքական շրջաբերականի երևոյթը, վրդովեցուցիչ են այդ փքուռոյց ներբողները օսմանեան տիրապետութեան հասցէին, բայց այդ կօնդակի յղացման և գուցէ նաև խմբագրութեան պատասխանատուութիւնը թերևս աւելի ծանրանում է Օտեանների վրայ — որոնց ջերմ, ըմբոստ ու ազատամիտ հայրենասիրութիւնը նոյնպէս վեր է ամեն կասկածից — նա ծանրանում է հայ դժբախտ, այլանդակուած իրականութեան վրայ, որ զուրկ ամուր նեցուկներից, հակազդեցութեան, դիմադրութեան սեփական միջոցներից, ապաւինած հզօրների կամքին ու խոստումներին, մոլորեցնում է երբեմն ժողովրդասէր, լուսամիտ և լաւագոյն գործիչներին, դատապարտում է՝ գնալ յաճախ մանուածապատ ճամբաներով, մերթ դէպի աջ, մերթ դէպի ձախ, նայեած թէ որ կողմից կը գան վարդագոյն, խոստումնալի „պատրանքները“...

1896 թուականը չէր այդ... Օրմանեանի ժամանակաշրջանը չէր։

Ա՜ծ էին դեռ պատրանքները 1876 թուականին, դիւրի՜ն էր դեռ խաբիլ սուլթանից, թիւրքերից այն պատմական և փոթորկոտ օրերում, երբ ծնւում ու կերպարանւում էր թիւրքիոյ մէջ սահմանադրական, բարենորոգչական հոսանքը, երբ հիմնւում էր օսմանեան պարլամենտը, երբ դեռ Կարմիր Գազանը — նոր միայն բազմած սուլթանական գահի վրայ — չէր ցոյց տուել իր ահռելի ժանիքները, երբ դեռ հայի հայրենիքը չէր տեսել գանգուածային ջարդերի ուրագանը...

Այնուամենայնիւ, Ներսէսի շրջաբերականը բուռն դժգոհութիւն յարուցեց որոշ հայ շրջաններում։ Եւ յարձակումներն ուղղուեցին պատրիարքի անձնաւորութեան դէմ։ Իսկ կառավարական շրջանների մէջ, ի՞նչ ասել կուզէ, խիստ գոհ էին... Գոհ էր առհասարակ Աբդիւլ Համիդը հայոց պատրիարքի ու պօլսահայերի բռնած ընթացքից և աւելի ևս խրախուսելու համար այդ նպաստաւոր տրամադրութիւնը՝ նա որոշեց հանդիսաւոր ժեստով յայտնել հայ ազգին իր արքայական համակրանքը. մի օր կանչեց Ներսէսին պալատ և կախեց նրա կրծքին օսմանիէ ականակուռ պատուանշանը։ Պառաւ աղուէսը սկսեց դրանով իր դժոխային հնարքները... Թովիչ լեզուով նա յուսադրում էր հայոց պատրիարքին. „Թո՛ղ, ասում էր, պատերազմը վերջանայ, ես գիտեմ, թէ իմ սիրելի, հաւատարիմ հայ ազգիս ինչե՞ր պիտի անեմ“..

Այդ ականակուռ շքանշանը առաջին անարգանքն էր, որ հայութեան ապագայ դահիճը հասցրեց հայ ժողովրդին...

Խրիմեան չկարողացաւ զսպել իրեն և խօսելով Ալաշկերտի սպանութիւնների ու աւերածի մասին — „Հայգոյժ“ի մէջ — ակնարկեց սուլթանական ընծայի վրայ.

Ոչխարներու ոսկրներէն մանեակ շինեցին և հովիւին վզէն կախեցին...

Եւ սակայն, Աբդիւլ Համիդի այդ սիրալիր ուշադրութիւնը խանդավառութիւն յարուցեց հայ Ազգային Ժողովի մէջ և որոշեցին նոյնիսկ շնորհակալութեան ուղերձ ներկայացնել սուլթանին... Ահա թէ որտեղ են ճշմարիտ պատասխանատուութիւնները Վարժապետեանի երբեմն վարած թիւրքամոլ քաղաքականութեան և նրա մի շարք „վրիպումների“ համար... Անհատական չէին այդ վրիպումները, այլ հաւաքական։ Եւ թիւրքահայոց այդ հակառուս ու տաճկանպաստ տրամադրութեան գերագոյն արտայայտիչն էր Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Գէորգ IV, որ մինչև վերջ մնաց իր խոր ու անհաշտ ատելութեամբ դէպի ռուսական ռէժիմը, հրաժարւեց օգնութեան կոչ անելու Ռուսաստանին, անգամ 1878-ին, երբ Թիւրքաց Հայաստանը ծայրէ ծայր մատնւել էր քրդական հրոսակներին, երբ Դիֆլիսի հայերը փոխարքայի միջոցով դիմում էին ցարին, միջամտութիւն աղերսելով և երբ Մատթէոս Իզմիրլեան, պատրիարքի ու ազգայինների յանձնարարութեամբ, եկել էր Էջմիածին (1878 թ. մարտի սկզբներին), դրդելու կաթողիկոսին, որպէս զի նա ցարի հովանաւորութիւնը խնդրէ կործանուող Հայաստանի համար...

Մի ուշագրաւ երևոյթ է թիւրքահայոց այդ ռուսատեաց տրամադրութիւնը, որ հասնում էր երբեմն վնասակար

*) „Մշակ“, 1876 թ. № 33.

**) „Մշակ“, 1876 թ. № 33.

ծայրայեղութիւնների, որոնց աղբիւրը, առհասարակ, ոչ այնքան անկեղծ թիւրքասիրութիւն էր, որքան ազգայնական, հայրենասիրական խոր բնազդը։ Ռուսաստանը, իր բոլոր առաւելութիւններով հանդերձ, թիւրքահայերի աչքում էապէս ազգայնակուլ մի ոյժ էր և կովկասեան հայութիւնը, նրանց կարծիքով, դատապարտուած էր վաղ թէ ուշ խպառ կորցնելու իր ազգային կերպարանքը և ձուլուելու ռուսութեան, օրթոդոքսութեան գրկում։ Եւ թւում է թէ այդ drofession de foi-ն, հակառուսական այդ ներշնչումները տիրում էին աւելի թիւրքահայ առաջաւոր ու գիտակից տարրերի մէջ — բուրժուազիայի, մտաւորականութեան — որոնք, բնականաբար, աւելի են մշակուած հայրենիքի գաղափարով, աւելի են զգայուն ու նախանձախնդիր ազգայնական սառցուածքների վերաբերմամբ — բայց միւս կողմից նոյն ռուսատեաց հոգեբանութիւնը, թւում է թէ, ընդհանրապէս խորթ էր բուն թիւրքահայ, գաւառական ժողովրդին, որ, ինչպէս գիտենք, միշտ էլ ջերմ խանդավառութեամբ է դիմաւորել ռուսական դրօշակին, թէ 1828-ի օրերում, երբ ռուսաց զօրքը առաջին անգամը Պասկեվիչի հետ մտնում էր Կարին, և թէ 1878-ին, երբ երկրորդ անգամ նոյն ռուս զօրքը յաղթական մուտք էր գործում նոյն քաղաքի մէջ, Լօրիս-Մէլիքովի հրամանատարութեամբ։

Ռուսասէր էր ընդհանրապէս թիւրքահայ ժողովուրդը, գիւղացիութիւնը, ռուսասէր էր նա վաղեմի, դարաւոր աւանդութիւնների զօրութեամբ, աւանդութիւններ՝ որոնց մէջ պ ա տ ր ա ն ք ի հետ միասին կար և խոշոր, անուրանալի ճշմարտութիւն (ռուսական տիրապետութեան առաւելութիւնները՝ մահմեդական աւերիչ ու բարբարոս լուծերի հանդէպ...) — բայց միւս կողմից՝ ռուսատեաց էր միջին թիւրքահայ ինտելիգենտը, բուրժուան, վաճառականը, ռուսատեաց էր շատ թէ քիչ գ ի տ ա կ ի ց ու աչքաբաց թիւրքահայը։

Խիստ հետաքրքրական և կարևոր են այդ հակառուս մտայնութեան և այդ „թիւրքասէր“ զգացումների լուսաբանութեան համար՝ այն մի շարք յայտարարութիւնները, որ արին թիւրքահայ երեսփոխանները օսմանեան անդրանիկ պարլամենտի մէջ — յայտարարութիւններ՝ որ պէտք է համարել ինքնայորդոր, յօժարակամ և ոչ բռնադատեալ։ Աւանդական „փօլիթիկն“ ևս, անտարակոյս, որոշ դեր ունէր հայ պատգամաւորների այդ խանդավառ ճառերի մէջ, բայց և անշուշտ, նրանց ռուսատեաց և թիւրքասէր շեշտերը au fond անկեղծ էին։

„Մասիս“ ամսագրի 1877-ի ապրիլ 28-ի համարում արձանագրուած է օսմանեան պարլամենտի մի նիստը պատերազմի խնդրի վերաբերեալ։ Խօսում են Ռուսաստանի դէմ նաև հայ պատգամաւորները։ Խօսում է ամենից առաջ Հալէպի երեսփոխան Խարաջեան էֆէնտի. յայտարարում է „իւր ազգակցած և մասնաւորապէս զինքն ընտրող գաւառին հայ ժողովրդեան կողմէ, թէ Ռուսիոյ պաշտպանութեան բնաւ պէտք չունին, այլ գոհ են իրենց ճակատագրէն և թէ պատրաստ են ամեն զոհողութիւն ընել՝ իրենց երկիրն ու վեհապետը Ռուսիոյ յարձակման դէմ պաշտպանելու համար“։

Մաքսուտեան Սեպուհ էֆէնտի հաստատում է Մանուկ էֆէնտիի ասածը։

Ապա խօսք է առնում Կարնոյ երեսփոխան Պալլարեան էֆէնտի։ Յայտարարում է, թէ „ինք, որ հայ է և Կարնոյ գաւառին երեսփոխան, այսքան կըսէ, թէ հայերն իրենց իշխանութիւնը կորսնցնելէ ետև, հինգ հարիւր տարիէ ի վեր իրենց կրօնքը, լեզուն և ազգութիւնը պահած են օսմանեան իշխանութեան ներքև“։

Պալլարեան էֆէնտիի այդ խօսքերը հաստատում է Կարնոյ միւս հայ երեսփոխանը, Դանիէլ Խարաջեան, աւելացնելով, որ „կարնեցիք, հայ և իսլամ եղբարք ի միասին զինուորուած են. ինքն ալ, որ տէրութեան աստիճանաւոր մ'է, իր ազգակցած օրինակ տալու համար՝ հասարակ զինուորաց կարգը մտել է“ և այլն։

Նոյն հակառուսական յայտարարութիւններն արեց և Ադրիանուպօլսի հայ երեսփոխան Ռուբէն էֆէնտի։

Ի՞նչ ապել կուզէ, պարլամենտի իսլամ մասը ցնծում է, ծափահարում, առաջարկում է բոլոր լեզուներով թարգմանել ու հրատարակել այդ ճառերը, որպէս զի աշխարհը տեսնէ, թէ ինչպէս Թիւրքիոյ հայ ու այլ քրիստոնեաները (մի քանի յոյն պատգամաւորներ ևս խօսեցին նոյն իմաստով) հակառակ են Ռուսաստանի հովանաւորութեան։ Հալէպի հայ երեսփոխանը խանդավառուած, վերստին բեմ է ելնում և „յանուն քրիստոնեայ երեսփոխանաց շնորհակալութիւն է յայտնում իսլամ երեսփոխաններին՝ նրանց եղբայրական զգացմանց համար“... Եւ խորհրդարանը նորէն թնդում է բուռն, երկարատև ծափերով...

Երկու ամիս յետոյ — այլ տեսարան։ Նոյն „Մասիս“ը իր յունիս 19-ի համարում տալիս է արձանագրութիւնը մի այլ նիստի, ուր խօսում է նոյն Կարնոյ երեսփոխան Համազասպ էֆէնտի Պալլարեանը. խօսում է բոլորովին տարբեր նիւթի — քրդական հարստահարութիւնների մասին։ Պատմում է, թէ ինչպէս աշիրէթապետները անպատիժ նիւթում են ամեն տեսակ սոսկումներ և վալիներից ու միւթէսարիֆներից շատերը գործակցում են քրդերին...

Երբ կը հարցնէի կուսակալներուն, թէ ինչու քիւրդերը չեն պատժուիր, որոյ համար երկու վայրկ զրբ բաւական է, և այսպէս անպատիժ թոյլ կը տրուի, որ շարունակեն իրենց չարագործութիւնները, ինձի կը պատասխանէին, թէ այս գործին մէջ „հիքմէթի հիւքիւմէթ“ կայ (պետական գաղտնիք)։ Վերջէն խելամուտ եղայ, թէ ի՞նչ է եղեր այդ պետական գաղտնիք բսածնին. այդ հիքմէթը սա է եղեր թէ կառավարութիւնն անոր համար այդ վիճակին մէջ կը պահէ եղեր քիւրդերը, որ եթէ հայերը Հայաստանի մէջ ապստամբական շարժում մ'ընեն, քիւրդերը զանոնք զսպեն և մէկ մ'ալ, որ

քիւրդերը, երբ պատերազմ բացւի Ռուսիոյ դէմ, օսմանեան բանակին իբրև կամաւոր զօրք, օգնութիւն պիտի ընեն եղեր...

Երկու նիստերի այդ տխուր կօնտրաստը, հայոց երկու յայտարարութիւնների այդ աղաղակող հակադրութիւնը այնքա՞ն բնորոշ է այն անել, յուսահատ, ողբերգական կացութեան համար, որի մէջ գտնւել է բանիցս թիւրքահայ հասարակութիւնը, ստիպւած՝ մի կողմից վախով ու կսկիծով մերկացնել թիւրք ռէժիմի դիւային „հիքմէթները" Հայաստանի մէջ, միւս կողմից ընդունել ու փաստաբանել հանդիսաւոր ձևերով, ի լուր պմբողջ Եւրոպայի՝ այդ նոյն չարագործ, ազգայնաջինջ ռէժիմի յարաբերական բարիքները... հանդէպ մի այլ, քրիստոնեայ ռէժիմի, որ սպառնում էր արշաւել դէպի Հայաստան և որ աւելի կարծր էր, դաժան, աւելի մահաբեր ու ահաւոր այդ թիւրքահայ իդէոլոգների աչքում, որովհետև նա, ճիշտ է, խնայում է ազգի մարմինը, պահպանում է նրա ֆիզիկական գոյութիւնը, բայց դրա փոխարէն՝ սպանում է „ազգութեան հոգին"...

Եւ այդ „հոգին" փրկելու համար էր, որ պատրիարք ու Ազգային Ժողով բռնեցին սկզբում բացարձակապէս թիւրքանպաստ ոչ հակառուս քաղաքականութեան մի գիծ։

Դա առաջին շրջանն էր ազգային վեհերոտ, ճակատագրօրէն ախտաւոր ու սայթաքուն քաղաքականութեան։

Բայց ահա ռուսաց զօրքը իր յաղթական ընթացքի մէջ հասաւ Սան-Ստեֆանո և ցարական թնդանօթի գոռ որոտը սասանեցրեց թիւրք կայսրութեան հիմքերը... Մէկէն ի մէկ յեղաշրջեց թիւրքահայ հասարակութեան տրամադրութիւնը, մէկէն ի մէկ ռուսասիրութիւնը դարձաւ կարգախօս և Ներսէս պատրիարքը, հնազանդելով դարձեալ ընդհանուր, հաւաքական կարգախօսին, բռնեց տրամագծօրէն հակառակ ընթացք, ուղևորւեց „դէպի Կանօսա", դէպի Սան-Ստեֆանոյ ռուսական բանակատեղին՝ հայցելու համար մեծ իշխան հրամանատարի և նրա միջոցով ցարի հովանաւորութիւնը։ Երկրորդ շրջանն էր այդ՝ հայկական քաղաքականութեան։

Արդիւնքը—16-րդ յօդւածը...

Աւելին էր սպասում հայութիւնը։ Նա այնքա՞ն զոհաբերել էր ռուսական յաղթանակներին և այնքա՞ն զրկանքներ ու աղէտներ էր ապրել պատերազմի միջոցին... Քիւրդ ու թիւրք՝ հեղեղի պէս թափել էին վրէժխնդրութեան իրենց թոյնը հայ բրիստոնեայ անպաշտպան ժողովրդի վրայ, որ չէր թագցրել իր համակրանքը ռուս յաղթական բանակին, անթիւ գիւղեր աւերւել ու հրդեհւել էին, բնակիչները կոտորւել, տաճարները սրբապղծւել և դեռ քանի՞ աղէտներ էին սպառնում պայթել այդ ժողովրդի վրայ, եթէ ռուսաց զօրքը քաշւէր, առանց հիմնական բարենորոգումներ մտցնել տալու երկրի մէջ... Միւս կողմից ամենքն էլ գիտէին, թէ թիւրքիայում և թէ Ռուսաստանում, թէ ինչ անգնահատելի ծառայութիւններ էր մատուցել ռուսներին կովկասյհայ ժողովուրդը, մի շարք փայլուն հայ զօրավարները, որոնք իրենց ռազմագիտական տաղանդով, յանդգնութեամբ ու ծանօթութեամբ տեղական պայմանների, երկրի բոլոր խորշերի՝ մեծապէս նպաստել էին ռուսաց զէնքի աջողութեան։

Այդ բոլորը գիտէին և Պետերբուրգում... Ե՞րբ են սակայն ռուս վարիչները արդարօրէն գնահատել ու վարձատրել հայ տարրի անբաւ զոհողութիւնները... Յիշենք դարձեալ 1826-28-ի մեծ դրաման, հայ ժողովրդի մասսային զինւորագրութիւնը ցարական դրօշակի տակ, Ներսէս Աշտարակեցու խանդավառ մասնակցութիւնը և ի վերջոյ՝ դառն, սրտաճմլիկ յուսախաբութիւնը...

Յուսախաբ մնաց և միւս Ներսէսը։ Դժգոհ մնաց հայութիւնը 16-րդ յօդւածից, որ շատ հեռու էր հայկական ինքնօրինութեան երազներից և որ լոկ տարտամ բառերով խոստանում էր իրագործել տալ ինչ որ բարենորոգումներ տեղական պէտքերին համեմատ...

Դրական երաշխի՞ք էր արդեօք—Հայաստանի բարենորոգման համար — ռուս զօրքի ժամանակաւոր ներկայութիւնը երկրի մէջ։ Ուզո՞ւմ էր արդեօք Ռուսաստանը անկեղծօրէն և լրջօրէն բարենորոգել այդ երկիրը,—թէ՞ նրան միայն հետաքրքրում էր ապագայ գրաւումի նախագիծը...

Այսպէս թէ այնպէս, թիւրքահայերը՝ յանձին նոյն իրենց առաջաւոր տարրերի՝ յուսախաբեցին Ռուսաստանից և ապաւինեցին... Նրա ոխերիմ հակառակորդ Անգլիային։ Նորէն կացութեան փոփոխութիւն—նորէն volte-face... Սկսւեց դրանով հայ քաղաքականութեան երրորդ շրջանը, որ պիտի վերջանար աւելի ցաւագին յուսախաբութեամբ։

Անգլիան արդէն պատմական այդ ահաւոր տագնապի մէջ ճիգ էր թափում պահպանելու թիւրքիոյ ամբողջութիւնը, ընդդէմ ռուսական արշաւանքի, որով միանգամայն վտանգւած էր տեսնում իր Հնդկաստանի ճանապարհը։ Անգլիան, Լորդ Բիկոնսֆիլդի չարաղէտ ներշնչումով, հոգին էր այն բոլոր դաւերի, որոնք նպատակ ունէին բաժանելու և իրար դէմ հանելու թիւրքիոյ քրիստոնեայ ժողովուրդները, տրամադրելու հայերին ի նպաստ թիւրքերի և ընդդէմ ռուսների, սնուցանելու հայերի մէջ սին, չարաշուք պատրանքներ, օրօրելով նրանց բրիտանական հովանաւորութեան լայնալայն խոստումներով... Անգլիան կանգնեցնում էր Ռուսաստանին Պոլսոյ ճանապարհի վրայ, իր ահարկու նաւատորմը նետելով դէպի Դարդանէլ։ Անգլիան, վերջապէս, հարկադրում էր Եւրոպային՝ վերաքննութեան ենթարկել Սան-Ստեֆանոյ դաշնագիրը և կոչում էր Ռուսաս-

տանին համաեւրոպական արէօպագ... Անգլիան ժամանակի ամենահզօր պետութիւնն էր և դէպի նա յառեցին Կ. Պոլսի հայ ազգայինների յուսավառ ու աղերսող աչքերը... Սան-Ստեֆանօի դաշնագրի վերաքննութեան առաջարկը գոհունակութիւն պատճառեց և հայկական շրջաններին։ Ակսեց մի տենդային ագիտացիա, Ներսէս պատրիարքը լարեց իր բոլոր ճիգերը, ի գործ դրեց իր բոլոր հնարքները՝ հայկական հարցը Եւրոպայի մէջ յուզելու համար և Բերլինի վեհաժողովից աւելին ստանալու, քան թէ տուել էր Սան-Ստեֆանօի դաշնագիրը։ Ֆրանսերէն ու անգլիերէն լեզուներով հրատարակւում են յօդուածներ ու բրոշիւրներ, հրատարակւում է Ներսէսի թելադրութեամբ և ընդարձակ տեղեկագիր Հայաստանի կացութեան մասին։

Արդէն իսկ Լօնդօնի, Մանչեստրի հայ գաղութները գործում էին եռանդով՝ հայութիւնը և հայ դատը ճանաչել տալու Եւրոպային, մասնաւորապէս Անգլիային։ Անգլօսիրութեան, աւելի ճիշտ անգլոմոլութեան մի կատաղեալ տենդ էր, որ բորբոքւեց հայերի մէջ։ Եւ կարելի է ասել, փոխադարձաբար, անգլիացիների մէջ ևս բորբոքւեց մի ճշմարիտ տենդ հայասիրութեան և հայկական հարցասիրութեան։ Ահա „Մասիս"ի այն ժամանակւայ մի թղթակցութիւն, որ պարզ գաղափար է տալիս՝ մեզ համար յուզիչ ու պատմական այն վայրկեանի մասին.

„Հայոց հարցը — գրում էր „Մասիս"ի լօնդօնեան թղթակիցը—Բաւական շարժում է առաջ բերել Լօնդոնի մէջ. շարունակ հայ ազգին և նրա ապագային մասին կը խօսին։ Այս յուզումն առաւել ևս զգալի եղաւ, երբ Ռուսիա Հայաստանի մէկ մասը սեփականել որոշեց։ Շատ քաղաքագէտ անձինք Ռուսիոյ դէպի Եփրատայ հովիտը յառաջանալուն մէջ մեծ վտանգ կընդունէին"...

Թղթակցի ասելով, անգլիական թերթերը շարունակ հրատարակում էին յօդուածներ ոչ միայն Հայաստանի մէջ կատարուող հարստահարութիւնների, այլ և հայոց պատմութեան, լեզուի, կրօնի մասին, պատկերազարդ թերթերը հրատարակում էին հայ թագաւորների ու հոգևորականների պատկերներ։ Լոյս է տեսնում „Դեսպանաժողովը և Հայք" վերնագրով մի տետրակ, որ ցրւում է պարլամենտի անդամներին, մինիստրներին, թագուհուն, լորդերին... Լաւ ընդունելութիւն է գտնում կլուբների ու եկեղեցական շրջանների մէջ... Ամեն տեղ ջերմ համակրանք հայերի համար։ Մասնաւոր հետաքրքրութիւն են ցոյց տալիս Արդալլի դուքսը և Ջէյմս Բրայս։ Վերջինս հրաւիրում է իր տուն իր անգլիացի բարեկամներին և Լօնդոնի ու Մանչեստրի ականաւոր հայերին՝ խորհրդակցելու համար հայկական դատը առաջ մղելու միջոցների մասին։ Ժողովին մասնակցում են քանի չափ ծանօթ անգլիացի գործիչներ, մեծ մասամբ պարլամենտի անդամներ։

„Սեղանի մը վրայ Հայաստանի աշխարհագրական ընդարձակ քարտէզ մը դրուած էր և ամեն ոք նրա դիրքը կը զննէր"... Խօսում են հայկական ավտօնոմիայի ու նրա հնարաւորութիւնների մասին։ Անգլիացիներից ոմանք առաջարկում են Լիբանանի պէս մի ռէժիմ սահմանել Հայաստանում.. Որոշւում է, վերջապէս, մի պատգամաւորութիւն ղրկել լորդ Դերբիին (արտաքին գործ. նախարար) և ներկայացնել նրան յիշատակագիր, խնդրելով, որ հայկական խնդիրը դրւի առաջիկայ Դեսպանաժողովի առջև։

Հայ թղթակիցը ի վերջոյ խանդավառ ուրախութիւն է յայտնում հանդէպ „ազնիւ ու վեհանձն ազգին զաւակներուն, որոնք հայ անւան ցոյց տւած կարեկցութեան և սիրոյն համար՝ համայն հայոց երախտագիտութեան արժանի են" *)...

Հետաքրքրական է 1878-ի ապրիլին Լօնդոնում հրատարակւած մի բրոշիւր „The Eastern Question and the Armenians" (Արևելեան հարցը և հայերը) խորագրով, որ մի ուշագրաւ մարգարէութիւն է և մի տեսակ ահազանգ Բերլինի Վեհաժողովի նախօրեակին.

Ներկայ պատերազմը պիտի բերէ՞ արդեօք վերջնական լուծումը—հարց է տալիս անանուն հեղինակը։ Եւ պատասխանում է վճռականապէս—ոչ։ Որովհետև, ասում է նա, Թիւրքիայից սպասել վերանորոգում, ռէֆօրմ—անկարելի է։ Եւ քանի որ Եւրոպան ստանձնել է իրաւարարի պաշտօն, ապա պէտք է լուծումն տայ Արևելեան խնդրին ոչ միայն եւրոպական, այլ և ասիական կողմից. պէտք է ազատագրէ ոչ միայն Բուլգարիան, այլ և Հայաստանը... Զգո՞յշ—ասում է նա, դիմելով պետութիւններին — եթէ Արևելեան հարցը լուծէք միմիայն Եւրոպայում և մոռացութեան տաք Ասիան, դուք դրանով կը փոխադրէք միայն խնդիրը, բայց չէք լուծի վերջնականապէս...

Եթէ եւրոպական Թիւրքիոյ իլօռը բուլգարն է, ասիական Թիւրքիայինը—հայն է։ Շատ խօսեցին վերջերս բուլգարների մասին և դա միանգամայն հասկանալի է, շատ էին յուզել բոլորին Բուլգարիոյ մէջ կատարւած „Թիւրքական սարսափները"։

Սակայն, եթէ կարելի լինէր ուրուագծել հայ ժողովրդի տառապանքների պատկերը՝ նա շատ աւելի ծանր պիտի լինէր բուլգարականից։ Բուլգարները գէթ շրջապատւած չէին այնպիսի վայրենի հորդաներով (քիւրդ, աւշար, չէրքէզ), որոնք շարունակ թալանում, ապանում ու սրբապղծում էին անպատիժ կերպով։ Այդպէս էր հայոց վիճակը պատերազմից առաջ. նա աւելի ևս ծանրացաւ պատերազմից յետոյ։ Մասնաւոր դէպքերը ընդհանրացան։ Բաւական չէ, որ 20—30 հազար հայ պատերազմի ատեն լծւեցին իբրև ճշմարիտ գրաստներ՝ թնդանօթներն ու ռազմամթերքը հեռու փոխադրելու և առհասարակ ամենածանր աշխատանքներ կատարելու համար, բաւական չէ, որ միայն հայ ժողովուրդը կողոպտեցին, առան նրանից ամեն ինչ՝ պատերազմի ծախքերը հոգալու համար, այլ և պարզապէս մատնեցին այդ ժողովուրդը քիւրդ հրոսակներին, որպէս զի նրանք իրենց կամաւոր մասնակցութեամբ ուժեղացնէին օսմանեան բանակը։ Եւ ամբողջ ճանապարհի վրայ, որ անցել են հրոսակները մինչև պատերազմի դաշտ — ոչինչ չի մնացել կանգուն։ Հսկայական է թիւը այրւած դիւղերի, սրբապղծւած ու թալանւած եկեղեցիների ու վանքերի, մեծ է քանակը և սպանւած հայերի...

Բայց ամենէն զարհուրելին, որ սարսուռ է ազդում իւրաքանչիւր քիչ թէ շատ մարդասէր անհատի վրայ—այն է՝

*) „Մասիս", 1878 թ. 6 ապրիլ։

որ պատերազմի վախճանը դեռ վախճան չէ հայկական այդ սարսափների։ Ընդհակառակը. բոլոր այդ ժամեղական ցեղերը—չէրքեզ, պօմակ և այլն—որոնց քշել է Ռուսաստանից ռուս յաղթական բանակը, պիտի նեռուին ասիական վիլայեթների վրայ, լի ատելութեամբ ու վրէժխնդրութեամբ և պիտի քաւել տան Ասիոյ քրիստոնեաներին... Ահա թէ ինչ է սպասում հայերին ապագայում...

***

Ուղիղ 35 տարի է անցել—և այսօր էլ նոյն երգն են երգում հայ և օտար՝ հայկական մշտադալար դատի շուրջը։ Նոյն յուսահատ գիտակցութիւնը յաւիտենօրէն անփոփոխ կացութեան, նոյն ցաւոտ ու չարագուշակ շեշտերը։ Կրկնո՞ւմ է, անվերջ, տաղտկալի, զզուեցուցիչ նօտերով կրկնում է հայոց պատմութիւնը և դեռ տասնեակ տարիներից յետոյ պիտի կրկնի նա՝ նոյն տխուր ու փառազուրկ էջերով, եթէ հայութիւնը շարունակէ իներտ որոճալ իր ինքնասպան կրաւորականութեան մէջ, եթէ նա ականջ չդնէ սարսափելի իրականութեան պահանջներին և չկազմէ, վերջապէս, լուրջ, ինքնապաշտպան ու գիտագրական ոյժ..

Մ. ՁԱՐԱՆԴԵԱՆ

ԱՒԳՈՒՍՏ ԲԷԲԷԼ

Ամբողջ կէս դար գերմանական և համաշխարհային պատմութեան բեմի վրայ պայքարող ու փոթորկուող մի կեանք է, որ մարում է իր վերջալոյսին։ Մի չքնաղ, հազուագիւտ կեանք, որ անսովոր փայլ էր տալիս ժամանակակից պայքարներին, մի մարդ, որ չէր իջել շատերի պէս „բարձրից“, ազնուական, բուրժուական դասակարգերից դէպի խաւար զանգուածները, այլ ընդհակառակը, բարձրացել էր ժողովրդային տառապանքի խորերից միշտ դէպի վեր, դէպի փառքի ու հմայքի անանցանելի գագաթները։ Այնտեղից նա իշխում էր տիրականօրէն իր ծնող ժողովրդի վրայ, իբրև մի ջինջ բարոյական իդէալ, կռում էր հզօր ձեռքով նրա դժուարին ճակատագիրը, առաջնորդում էր պրոլետարիատը պայքարից-պայքար, յաղթանակից-յաղթանակ, դէպի գալոց սոցիալական դրախտը, առաջնորդում էր իր հմայիչ խօսքի ուժով, գիւթում էր բազմահազար լսարանները իր հուժկու պերճախօսութեամբ, թնդացնում էր Ռայխստագի կամարները հանդիսաւոր վայրկեաններում — և միլիոնաւոր ու միլիոնաւոր մարդիկ ունկնդրում էին վախտ, շանթարձակ մարգարէին՝ սրտատրոփ, յուզմունքով, մի ճշմարիտ կրօնական ուշադրութեամբ, մինչ աշխարհի „հզօրները“ համակուում էին երկիւղով ու պատկառանքով...

Աւգուստ Բէբէլ մեռաւ, Գերմանական Սոցիալ-Դեմոկրատիան զրկուեց իր մեծագոյն առաջնորդից, համաշխարհային Սոցիալիզմը կորցրեց իր ամենախոշոր աստղերից մինը։

Անակնկալ չէր այդ մահը եօթանասնամեայ տրորուած ու հիւանդոտ գործիչի, նա չ՚ընկաւ կրկէսի մէջ բուռն պայքարի միջոցին, նա արդէն իսկ մէկ ոտքով գերեզմանումն էր, հեռու կեանքի ժխորից, դվեհափառ մեկուսացման“ մէջ իր յուշերը արձանագրելիս... Եւ սակայն, տեսէք այդ անհամար արտասուացող աչքերը յուղարկաւորութեան թափօրներին, ականջ դրէք այդ դառն հեծկլտոցներին, որ հնչում են սգաւոր պրոլետարիատի և սոցիալիստ մտաւորականութեան շարքերից, լսեցէք ցաւի ու ափսոսանքի այդ անսովոր շեշտերը համաշխարհային մամուլի մէջ, անգամ ամենամեծ բուրժուազական օրգաններում... Ցաւաւորութիւնը ահագին է, սասանեցուցիչ։ Գուցէ երբէք քաղաքակիրթ մարդկութիւնը ի դէմս իր առաջադէմ հաւատածների չէր զգացել այնպիսի սարսուռ, այնքան ցաւոտ, անդարմանելի դատարկութիւն, գուցէ երբէք ոչ մի մահգոյժ չէր յարուցել աշխատաւոր և մտածող զանգուածներում այնքան ուժեղ ու խոր ցնցում, ինչպէս այդ կարճ, լակոնիկ հեռագիրը, որ շվեյցարական մի խուլ գիւղից տարաւ դէպի աշխարհի չորս ծայրերը՝ հռչակաւոր սոցիալիստի մահուան բօթը։ Ահագին էր այն կորուստը, որ ապրում էր գիտակից և տառապող մարդկութիւնը վերջին դարու ընթացքում՝ ի դէմս իր մարող հանճարների ու ռազմիկների—Վիկտոր Հիւգոյի, Բլանկիի, Լասսալի, Գարիբալդիի, Գամբետտայի, Մարքսի, Դարվինի, Գլադստօնի, Տոլստոյի—բայց և ոչ մէկին այնպէս ջերմօրէն չ՚ողբաց Եւրոպան, ամբողջ պայքարող գաղափարական Եւրոպան, ոչ մէկի պատճառած սուգը չ՚եղաւ այնքան ընդարձակ ու խորունկ, անդարմանելի, ինչպէս այս մէկը, որ երէկ տանում էր Հարիւր հազարաւոր մարդկային ծովը Ցիւրիխի փողոցներով, Բէբէլի դիակառքի ետևից։

Ո՞ւր է գաղանիքը... Բէբէլ չուներ, սակայն, ոչ Մարքսի ու Լասսալի ներհուն միտքը, ոչ Բլանկիի ու Գարիբալդիի յեղափոխական ոգին և հերոսութեան ու մարտիրոսութեան դափնիները, ոչ Հիւգոյի ու Տոլստոյի ստեղծագործող հանճարը, ոչ էլ Գամբետտայի բոցաշունչ պերճախօսութիւնը։ Նա առաջին հռետորն էր միմիայն Գերմանիայում, ուր առհասարակ խիստ սակաւ են ճշմարիտ հռետորները, նրա խօսքն ու ժեստը — որքան և գեղեցիկ—դալկանում ու մարում էին ժօռէսեան ճարտասանութեան հսկայ խոյանքների հանդէպ, ուր գիտութիւնը, փիլիսոփայութիւնն ու արուեստը մրցում են, հաւասարապէս զօրաւոր և տիրական։ Ճատ փայլուն չէր և Բէբէլի հրապարակախօսութիւնը, նրա գրքերը սքանչելի ժողովրդացումն են սոցիալիստական գաղափարների, բայց չեն զարմացնում խորութեամբ, նրա գիտական-փիլիսոփայական պաշարը սահմանափակ է... Եւ ի՞նչ զարմանք. այդ ինքնուս պրոլետարը միջնա-

կարգ դպրոց անգամ չի անցել. ինքնաշխատութեամբ հասել էր նա ամենաբարձր, ամենանախանձելի դիրքի, որ կարող է երազել մի մեծ երկրի քաղաքական գործիչ. ինքնաշխատութեամբ, յամառ, անդուլ ճիգերով նա դարձել էր Գերմանիայի մեծագոյն կուսակցութեան առաջնորդը, նրա գերագոյն ղեկավարը։

Պրոլետար՝ իր ծագումով, պրոլետար՝ իր նիւթական կացութեամբ, կարիքներով ու զրկանքներով, պրոլետար և սոցիալիստ իր բնազդով ու աշխարհայեացքով՝ նա 26 տարեկան հասակի մէջ բազմում է, իբրև պրոլետարիատի միակ ներկայացուցիչ գերմանական պարլամենտի մէջ (1867 թ.) և մի առժամանակ ճակատամարտում է մեն-մենակ ամբողջ բուրժուապահպանողական բլոկի դէմ։ Շուտով միանում է նրան Լիբկնեխտ, միանում են կամաց-կամաց այլ սոցիալիստ



Ռ Է Բ Է Լ

պատգամաւորներ, որոնց շարքում Բէբէլ շարունակում է պահպանել իր եզակի դիրքը, բարձրանում է աստիճանաբար իր արտակարգ գործունէութեան, իր կուռոյ տեմպերամենտի, իր խոշոր ու բնածին կարողութիւնների շնորհիւ, բարձրանում է իր ծնող-պրոլետարիատի աստիճանական վերելքի հետ, ինքն անձամբ հզօրապէս նպաստաւորում է այդ վերելքը իր բուռն, տենդային քարոզչութեամբ և ի վերջոյ... նախկին անուս ճախարակագործը դառնում է գերմանական Ռայխստագի ամենափայլուն աստղը, Բիսմարկի ամենաահեղ հակառակորդը...

Այդտեղ է ահա երևոյթը իր եզակի, համաշխարհային բնաւորութեամբ։

Թէորետիկոս չէր Բէբէլ, գիտնական չէր, ոչ իսկ համալսարանաւարտ, բայց նա գործնական վարիչն եղաւ մի ահագին կուսակցութեան, իր անվրէպ բնազդով, պրոլետարական հոտառութեամբ՝ նա գիտցաւ մարզել ու ղեկավարել աշխատաւորների բազմամիլիոն բանակը, որը խորունկ հիացումով, գրեթէ կոյր հնազանդութեամբ հետևում էր նրա հրահանգներին... որովհետև Բէբէլ խորթ չէր այդ աշխատաւոր ընդհանրութեան համար, նա պրոլետարիատի հարազատ զաւակն էր, նրա իղձերի ու կարիքների ճշմարտագոյն թարգմանը, նրա դատի ու դրօշակի ամենաջինջ կրողը։ Մարքս, Լասսալ, Էնգէլս, Լիբկնեխտ — նրանք բոլորը մտաւորական գործիչներ են, որ գալիս են բուրժուազական շրջաններից և գաղափարական մղումներով որդեգրում են աշխատաւորական դատը։ Աւգուստ Բէբէլ—նա ինքը մարմնացումն է և խիղճը պրոլետարիատի. նա գերմանական աշխատաւորի կատարելատիպն է, նրա ուղեղով՝ կուռ ու յստակ մտածում են միլիոնաւոր հարստահարուածները, նրա սրտով ուժգնօրէն բաբախում են միլիոնաւոր ուրիշ սրտեր, նրա լեզուով՝ պարզ ու խրոխտ բառբառում են միլիոնաւոր լեզուները։ Նրա փայլուն կարիէրի մէջ պրոլետարիատը իր սեփական բնաշրջումն էր նախատեսնում, նրա սրարշաւ առաջխաղացութեան ու վերելքի մէջ աշխատաւոր դասակարգը տեսնում էր իր սեփական ու յաղթական վերելքը, որ պիտի բերէր աշխարհին Սոցիալիզմի ու հաւասարութեան թագաւորութիւնը...

Այդտեղ է ահա նրա վիթխարի ժողովրդականութեան գաղտնիքը, այդ հանգամանքի շնորհիւ է, որ նա ձեռք բերեց մասսաների վրայ մի այնպիսի ազդեցութիւն, որպիսին չի ունեցել ոչ մէկը իր նախորդներից ու ժամանակակիցներից, որպիսին չունի անգամ սոցիալիստ հռետորներից ամենաշքեղը և ամենագիտնականը— Ժան Ժորէսը։ Իրաւ է, սակայն, միջավայրի ու ցեղային խառնուածքների ուշագրաւ տարբերութիւնը կայ... Բէբէլին աւելի դիւրին էր ստեղծել կուռ ու հնազանդ մի բանակ գերմանական կարգապահ ու հեղինակապաշտ ժողովրդի մէջ, քան Ժորէսին Ֆրանսիայում, ուր համեմատաբար թոյլ է երամական բնազդը, թոյլ է և դիսցիպլինը, կարգապահութիւնը, ուժեղ են դրա հակառակ ըմբոստ ու անարշիկ, անհատապաշտ բնազդները։

Անշուշտ, գերմանական պրոլետարիատի խանդավառ պաշտամունքը դէպի Բէբէլ չի բացատրւում սոսկ նրանով, որ վերջինը նրա հարազատն էր, որ դկուռքը" շինուած էր պրոլետարական միս ու արիւնից։ Շատ-շատերն են առաջ եկել և գալիս են շարունակ նոյն պրոլետարիատի շարքերից, շատ շատերն են փորձում իրենց ուժերը քարոզչական կարիէրի մէջ, բայց չեն հասնում երբեք Բէբէլի ժողովրդականութեան, չեն դառնում կուռք։ Պէտք է դրա համար արտակարգ անհատականութիւն, պէտք են արտակարգ կարողութիւններ—ոչ միայն մտաւոր, այլ և բարոյական։ Բէբէլ ունէր թէ մէկը և թէ միւսը։

Խառնուածքով անպայման յեղափոխական, բնաւորութեամբ շիտակ, համեստ, ուղղամիտ՝ հեռու սին démagogie-ի հովերից, անկեղծօրէն ու ամբողջապէս ն իրւած իր մեծ դատի շահերին—սոցիալիստ պարագլուխը ունէր դրա հետ և մի հզօր ու լափող կիրք—նոյնքան հզօր՝ սիրոյ, որքան և ատելութեան մէջ։ Նրա ջերմ ու քնքոյշ սէրը դէպի տանջւող ու աշխատաւոր դասակարգը, ծնում էր նրա մէջ ատելութիւն դէպի իշխող ու կեղեքիչ դասակարգերը, դէպի ժամանակակից կապիտալիզմի սիստեմը, որ այնքան չարիքներ ու ոճիրներ է նիւթում տանկ ու իրաւազուրկ պրոլետարիատի համար, որ նրա ձեռքով արտադրում է բիւրաւոր հարստութիւններ, որոնք սակայն բաժին են մնում կեղեքիչ փոքրամասնութեան։

Որքան ազնիւ ու վեհանձն էր սոցիալիստ առաքեալը իր սիրոյ մէջ, նոյնքան ազնիւ ու վսեմ էր ատելութեան պոռթկումների մէջ։ Մինչև վերջ մնաց նա անհաշտ, ոխերիմ թշնամի կապիտալիստ - բուրժուական սիստեմի և մինչև վերջ խանդավառ ու լաւատես գուշակող ապագայ սոցիալիստական իրաւակարգի։ Մինչև վերջ—պրոլետարիատի „քուրմ“, „իշխան“ և մինչև վերջ—նրա մտերիմ ընկեր, ուղեկից և բախտակից։

Parteileiter!—„Կուսակցավար“, հայերէն բառացի թարգմանութեամբ. կուսակցութեան ղեկավար, առաջնորդ. — այդ է Բէբէլի ամենամեծ, ամենահարազատ տիտղոսը. լիդեր, վարիչ՝ բառի բովանդակ ու լաւագոյն իմաստով։ Գերմանական Սոցիալ-Դեմոկրատիան մէկ իսկական և կարելի է ասել գրեթէ միահեծան վարիչ է ունեցել—և դա Բէբէլն է։ Երբ հնչում էր նրա հուժկու և ախորժալուր բարիտոնը հսկայական դահլիճներում, բազմութիւնը դառնում էր մարմնացած պատկառանք և ուշադրութիւն։ Ձայնը հնչում էր ընդհանրապէս միալար ու ձանձրոտ, առանց խոշոր ելևէջների, բայց հնչում էր զօրաւոր, առնական շեշտերով. սուր, թափանցող աչքերը հմայում էին ունկնդրին. խօսում էր հռետորը ընդհանրապէս անշարժ կայնած, մէկ ձեռքը գրպանի մէջ, միւս ձեռքի ցուցամատը ուղղուած դէպի հակառակորդը կամ դահլիճի որևէ անկիւն։ Համակրելի ու գրաւիչ էր այդ ձայնը, չափազանց գրաւիչ ու ազդու էին նաև այդ զոյգ աչքերը՝ օրիգինալ, հազւագիւտ, փոքր ինչ մէֆիստոֆէլեան դէմքի վրայ։

Ճառերը միշտ խնամքով մշակուած, պատրաստուած էին և միշտ էլ փաստացի ու բովանդակալի — *sachlich*, առանց աւելորդ ռէտորիկի։ Բէբէլեան ճառերը Ռայխստագի մէջ մի մի հրահանգիչ ատենախօսութիւններ էին. ահագին էր հռետորի յիշողութիւնը, ահագին՝ նիւթի, փաստերի—և ամենաայլազան փաստերի—պաշարը նրա գլխի մէջ... Այդ էր, որ ազդում էր հակառակորդների վրայ և յաճախ ջղաձգութիւններ էր պատճառում ամենակարող Բիսմարկին։

Ահա թէ ինչու „պառաւ առիւծը“ մի կատարեալ իշխանութիւն էր հաստատել իր միլիոնաւոր հաւատացեալների սրտերում։ Նրա փորձառութիւնն ու հեղինակութիւնը սոցիալական խնդիրների աշխարհում այնքան մեծ էր, որ նրա առջև յաճախ խոնարհւում ու տեղի էին տալիս անգամ կուսակցութեան գիտնական վարդապետները—Կաուցկի, Բերնշտայն և այլն։ Ժողովուրդը, մասսան Բէբէլի հետ էր միշտ,—ինչ վճիռ էլ ընդունէին կուսակցական համաժողովները։ Գաղափարային մեծ բաղխումների ու կրիզների ընթացքում պրոլետարիատը երբէք չէր զատւում իր Բէբէլից և պաշտպանում էր միշտ նրա կողմը... Այդ պատճառով և մեծ ռիսկ էր Բերնշտայնների համար՝ Բէբէլի հակառակ դիրք բռնել. Դրէզդէնի յիշատակելի պարտայտագը (1903 թ.-ի կուսակցաժողովը) ցայտուն կերպով վեր հանեց ամբողջ Գերմանիայի և աշխարհի առաջ Բէբէլի ահեղ ու ճնշող հեղինակութիւնը։

Այդ մարդուն շատերը գիտեն, իբրև անհաշտ ու մոլեռանդ մարքսիստի, իբրև դասակարգային պայքարի նեղ, դոգմատիկաբար և տարամերժ առաքեալի։ Միանգամայն սխալ կարծիք։ Ուղղափառ մարքսիստ էր նա խօսքով միայն։ Ընդունում էր, հարկաւ, մարքսեան վարդապետութեան ընդհանուր դրութիւնները, բայց և միանգամայն հեռու էր դասակարգային պայքարի այն ըմբռնումներից, որ քարոզում էին մի շարք ֆանատիկոս մարքսապաշտներ։ Նա նախ և առաջ գործնական մարդ էր և „թէորիան“ երկրորդական արժէք միայն ունէր նրա աչքում։ Նրա ուժեղ և ըմբռստ անհատականութիւնը չէր կարող ընդունել կուրօրէն մի շարք „ճշմարտութիւններ“, որոնց դարձրել էին մի տեսակ „հաւատոյ հանգանակ“, որոնք սակայն չէին համապատասխանում իրականութեան, չէին բղխում նրա պահանջներից։ Դեռ բոլորովին երիտասարդ էր, երբ — 60-ական թուականների վերջերում—ցոյց տւեց իր ըմբոստութիւնը մարքսեան պատրաստի „ֆորմուլների“ վերաբերմամբ։ Վիլհելմ Լիբկնեխտ — մի այլ խոշոր սոցիալիստ առաքեալ, որ երկար տարիներ ապրել էր Լոնդոնում Մարքսի ու Էնգելսի ընկերութեան մէջ—եկել էր 60-ական թուերին Գերմանիա, չեզոքացնելու նոր սկսած լասսալեան շարժումը և պատւաստելու մարքսիզմը։ Վիլհելմ Լիբկնեխտ կենտրոնացնում է իր քարոզչական ճիգերը նախ և առաջ Բէբէլի վրայ, աւանդում է նրան մարքսեան աւետարանը, ճգնում է մտցնել նրա ուղեղի մէջ բոլոր ուղղափառ ֆորմուլները։ Նա յորդորում է բոյկոտ անել հիւսիսային-գերմանական նոր պարլամենտը, փակւել „բողոքող մեկուսացման“ մէջ, հրաժարւել առհասարակ պարլամենտարիզմից (մարքսիզմի այդ անիշխանական տեսակէտը յետագայում փոխւեց, ինչպէս փոխւեցին և դոգմի ուրիշ կէտեր *)։ Բէբէլ չհամա-

*) Տես այդ բոլորի մասին, ինչպէս նաև Բէբէլի սոցիալիստական տակտիկի մասին՝ Մ. Ա. „Հոսանքներ“-ի մէջ։

կերպեց։ Ընդունելով Հանդերձ Կարլ Մարքսի որոշ դրութիւնները, ընդունելով դրա հետ իր ուսուցչի, Լիբկնեխտի, հեղինակութիւնը,—որին շուտով պիտի գերազանցէր—նա մերժեց „հակապարլամենտական“ տեսակէտը և որոշեց բուռն կերպով մասնակցել ընտրութիւններին ու պարլամենտի օրէնսդիր գործունէութեան (1867 թ.), որով հնարաւոր էր փոքր ինչ նպաստել տնտեսական ու քաղաքական ռէֆորմներին, յօգուտ աշխատաւոր ժողովրդի։ Գնաց, իբրև աշխատաւորութեան առաջին երեսփոխան, նորակազմ պատգամաւորական ժողովը, որ մի բաւական խեղճ, ցենզաւոր հաստատութիւն էր, բայց շուտով վերածուեց ընդհանուր համագերմանական պարլամենտի, հիմնուած ընդհանուր ձայնատուութեան վրայ։ Եւ Բէբէլ քաշեց իր ետևից—պարլամենտական, ռէֆորմային գործունէութեան մէջ — իր ուսուցչին, կէս-մարքսիստ, կէս-անարխիստ Լիբկնեխտին։

Քիչ յետոյ—մի մանրամասնութիւն է, բայց յատկանշական—Բէբէլ, խիստ ոգևորուած Դիւրինգի կոմունիստական, ընկերվարաշունչ մի գրուածքով, առաջարկում է իր ուսուցչին՝ յանձնարարել գրուածքի ընթերցումը բանուորական շարքերին և գրել նրա առթիւ մի յօդուած կուսակցական օրգանի, „Volkstaat“-ի մէջ։ Լիբկնեխտ մերժում է, առարկելով, որ Դիւրինգ յարձակումներ է գործում Մարքսի ու նրա մեթոդի վրայ։ Բէբէլին դուր չէ գալիս այդ պատասխանը. „Թո՛ղ կորչի — ասում է նա — այդ մեթոդը, եթէ գրուածքը լաւ բան է“ (*Ich pfeife auf die Methode* *), *wenn die Sache gut ist*).

Եւ նա ինքը գրեց յօդուած Դիւրինգի բրոշիւրի մասին, ու հակառակ Լիբկնեխտի ցանկութեան, զետեղեց կուսակցական օրգանի մէջ։

Անկախութեան ու գործնական ողջմտութեան այդ գիծը յարատևեց գործիչի ամբողջ կեանքի ընթացքում. և որքան էլ մարքսիստական ուղղափառութիւնը հոչակէ Բէբէլին իբրև կարմիր, յեղափոխական, „կատաստրոֆային“ ըմբռնումների ներկայացուցիչ, որքան էլ զարդարեն նրան դասակարգային, „պրոլետարական ջինջ, տարամերժ պայքարի“ ֆորմուլներով, — իրողութիւնը մնում է այն՝ որ Բէբէլ գերազանցապէս է ո ւ ց ի օ ն ի ս տ ու ռ է ֆ օ ր մ ի ս տ էր (աստիճանական և բարենորոգչական) իր աշխարհայեցութեամբ ու գործելակերպով, որ նա ի հարկին մտել է յաճախ կոմպրոմիսի, իրաւախոհութեան մէջ ոչ-պրոլետարական կուսակցութիւնների հետ, կոչ է արել բուրժուա-ռումակավար հատուածների աջակցութեան—ռէֆորմների գործը փութացնելու նպատակով—մի տակտիկ՝ որ լաւագոյնն է, միակ ընդունելին արևմտեան սահմանադրական երկրներում, մի տակտիկ՝ որին հետևել ու հետևում են բոլոր պարլամենտական երկիրների սոցիալիստ կուսակցութիւնները։ Իրողութիւնն այդ է, մնացածը սոսկ յեղափոխական ֆրազաբանութիւն է, որով մերթ ընդ մերթ այդ համեստ մարքսիստ բարենորոգչականները փորձում են վախեցնել բուրժուազիային։

Անհաշտ դօքտրինեօր չէր Բէբէլ, իրաւախոհութեան, կոմպրոմիսի կողմնակից էր նա և ներքին, կուսակցական կեանքի մէջ։ Դրէզդէնի պարտայտագից յետոյ... եկաւ Մանն Հոյմի համաժողովը։ Երբ Բէբէլ տեսաւ, որ այսպէս կոչուած „ռէվիզիոնիզմի“ հոսանքը միշտ աւելի և աւելի հզօր ծփանքով շեշտւում է կուսակցութեան լայն խաւերում, երբ տեսաւ, որ այդ ռէվիզիոնիստների *) և այսպէս կոչուած „յեղափոխականների“ միջև անդունդը միշտ աւելի և աւելի լայնանում է, սպառնալով նետել կուսակցութիւնը անդարմանելի տագնապների մէջ, հմուտ ու խոհական կուսակցապետը փոխեց ֆրօնտը, թողեց իր երբեմնի „տարամերժ“ ընթացքը, մոռցաւ Դրէզդէնի իր շանթոտ բանադրանքները և տարուած կուսակցութեան միութիւնն ու ամբողջութիւնը պահպանելու մտահոգութեամբ՝ յարմարուեց նոր կացութեան պահանջներին, դիմեց հաշտարար քաղաքականութեան, մերժեց ոմանց առաջարկը խմբովին հրաժարեցնելու մի շարք ռէվիզիոնիստների և գտաւ հաշտեցնող ֆորմուլներ կուսակցութեան ձախակողմի ու աջակողմի միջև։

***

Իր կեանքը—կուսակցութեան կեանքն է։ Հետևել է այդ կուսակցութեան էվոլիւսիոնին, սկսած նրա օրօրոցից մինչև այսօր, երբ գերմանական Սոցիալ-Դեմոկրատիան—մասամբ նոյն Բէբէլի ջանքերով—դարձել է աշխարհի ամենաբազմամարդ, ամենահոյակապ կազմակերպութիւնը, մի կուռ ու կարգապահ մարմին, որ թէպէտ և իր ահագին թւի համեմատ չունի յեղափոխական կրակ ու ինիցիատիվ, բայց կոչուած է ծանրակշիռ դեր խաղալու Եւրոպայի ապագայ վերիվայրումների մէջ։

Ի՞նչ յուզիչ սկզբնաւորութիւն վաթսունական թվականներում... Մի փոքր, թուլակազմ երիտասարդ, մի խղճուկ արհեստաւոր, զաւակ թշուառ ընտանիքի, կորցրած իր հարազատ մայրը՝ տակաւին մանուկ հասակում, տանջուած խորթ մօր և բիրտ զինուորական հօր ձեռքերում, մատնուած վաղաժամ ի սաստ կեանքի հողմերի, կուրծքը արդէն մշակուած սարսափելի միկրոբներով, բերանը արիւն թքելիս... Եւ այդ թշուառ ու լքուած էակին—ճակատագրի մի զարմանալի և զմայլելի խաղով—վիճակուած էր դառնալ, մի քանի տասնեակ տարիներ յետոյ, այն հսկայ կաղնին, որ այսօր իր փարթամ, լայնարձակ ճիւղաւորութեամբ ծածկում է ողջ Գեր-

*) Բառացի. „ես սուլում եմ այդ մեթոդը“...

*) Բարենորոգչական չափաւոր հոսանքը, որ մկրտուած է Բերնշտայնի անունով։

մանիան և որի անունը հիացմունքով ու երախտագիտութեամբ են արտասանում միլիոնաւոր մարդիկ՝ նաև գերմանական հայրենիքից դուրս, աշխարհի բոլոր ծայրերում...

Ուիրբել բանւորական դատին, իր հարազատ դասակարգի դատին — այս էր նրա երազը, իդեալը՝ դեռ գրեթէ պատանեկան հասակում։ Լասսալ սկսել էր արդէն իր սոցիալիստական գործունէութիւնը, անօրինակ որոտներով ու շանթերով. բա՝ց Լասսալ մի մեթէօր էր, որ սրարշաւ զարնեց ու անցաւ *), նրանից յետոյ մնում էր մի փոքրիկ կազմակերպութիւն բանւորների մէջ։

Բէբել չէր էլ սիրում Լասսալին, Բիսմարկի հետ ունեցած նրա բանակցութիւնների պատճառով։ Նա երկար տարիներ աշխատեց Լայպցիգում, լասսալեաններից դուրս, ուրիշ բանւորական շրջաններում աշխատեց նախ իբրև սոսկ ռամկավարական, ապա դարձաւ սոցիալիստ։ Եւ երբ Լիբկնեխտ եկաւ Լօնդոնից ու մկրտեց նրան մարքսիզմի աւազանում, այնուհետև երկու մեծ գործիչները—Բէբել և Լիբկնեխտ—իբրև անբաժան ու սիրող ընկերներ, առաջ տարան միասին տասնեակ տարիներ շարունակ, իրենց բեղմնաւոր քարոզչական աշխատանքը **)։

Երկու ընկերներին մենք տեսնում ենք 1871-ի համագերմանական առաջին պարլամենտի մէջ, իբրև զոյգ ներկայացուցիչներ աշխատաւոր դասակարգի։ Կատարւել էր մեծ, պատմական անցք։ Գերմանիան արիւնալի ջարդ էր տւել Ֆրանսիային, Նապոլէօն III գերի էր բռնւել Սեդանում և Բիսմարկ գնում էր յափշտակելու Էլզաս-Լոտարինգիան։ Պէտք էր բողոքել այդ բռնութեան ու անիրաւութեան դէմ, պէտք էր հնչեցնել սոցիալիզմի ու խաղաղասէր աշխատաւորութեան ձայնը։

Պէտք չէր թոյլ տալ, որ տեվտօնական բիրտ հարւածների տակ արիւնոտւեր ու մահանար դիւցազնական Ֆրանսիան, Մեծ Յեղափոխութեան որորանը, Ռօբեսպիէռի ու Դանտօնի հայրենիքը։

Եւ երկու ընկերները ամբիոն բարձրացան Ռայխստագի մէջ։ Վայրկեանը ահեղօրէն հանդիսաւոր էր։ Ամբողջ Գերմանիան արթած, գինովցած, Բիսմարկի գովքն էր անում։ Շովինիզմը յորձանք էր տալիս գերմանական բոլոր նահանգներում, բուրժուա և պրոլետար, հարուստ և աղքատ, բոլորն էլ արտադրւած էին յոգուտ Պրուսիոյ և ընդդէմ Ֆրանսիայի։ Ռիսկը մեծ էր, ահագին։ Բէբել և Լիբկնեխտ գրեթէ մենակ էին իրենց արբշիռ ու զառանցող հայրենիքում։ Այնուամենայնիւ, բեմ ելան։ Եւ արտասանեցին Բիսմարկի ու ամբողջ իշխող, պատերազմիկ դասակարգի դէմ մի ահարկու մեղադրական, առան իրենց պաշտպանութեան տակ Ֆրանսիային և բողոքեցին Էլզաս-Լոտարինգիայի գրաւման դէմ։ Ամբողջ Ռայխստագը ոռնում էր երկու սոցիալիստ առաքելաների դէմ, նախագահական զանգը անընդհատ ղողանջում էր, պարլամենտի մէջ և դուրսը հրապարակում բռունցքներ էին բարձրանում Բէբելի ու Լիբկնեխտի դէմ, մահւան վտանգն իսկ իրենց աչքերն էին առել երկու բողոքող սոցիալիստները։

Վերջացաւ պատմական նիստը, սոցիալիստների այդ վսեմ, անօրինակ ժեստը ուժգին արձագանք գտաւ ամբողջ աշխարհում։ Իրենց հայրենիքում այնուհետև հալածական՝ բողոքողները արժանացան ամբողջ մտածող Եւրոպայի, մասնաւորապէս դժբախտ, ոռնահարւած Ֆրանսիայի համակրանքին ու երախտագիտութեան։

Բիսմարկ չմարսեց սոցիալիստական յանդուգն ապտակը և հրամայեց բանտ նետել երկու խիզախներին։ Շառաչալի դատավարութիւն Լայպցիգի մէջ։ „Hochverrath“ բառով որակեցին քաղաքական ոճիրը։ — „Դաւաճանութիւն ընդդէմ պետութեան“։ Բէբել և Լիբկնեխտ դատապարտւեցին երկու տարւայ բերդարգելութեան։

Բանտային կեանքը օգնեց Բէբելին, վնասելու տեղ։ Նրա առողջութիւնը համեմատաբար կազդուրւեց, փրխրուն մարմինը շտկւեց, իսկ հոգին... աւելի ևս վառւեց ըմբոստութեամբ։ Երկու ընկերները—ուսուցիչ և աշակերտ — գրեթէ միշտ մնացին մէկ խուցի մէջ։ Լիբկնեխտ օգնեց Բէբելին՝ լրացնելու կրթութեան պակասը, սովորեցրեց լեզուներ, աւելացրեց մտաւոր պաշարը։

Եւ ապագայ լիդերը դուրս եկաւ բանտից աւելի ուժեղ՝ թէ մարմնով և թէ մտքով, աւելի պատրաստ ու ձեռնհաս՝ սոցիալական մեծ պայքարների համար։ Այնուհետև, Բէբել դեռ մի քանի անգամ ևս բանտ նետւեց՝ „նորին Մեծութեանը“ վիրաւորանք հասցնելու պատճառով։ Ընդամենը մօտ 5 տարւայ բանտային կեանք, որ խոշոր բան է արևմտեան յեղափոխականի կեանքում։

Բանտը աճեցրեց և Բէբելի հմայքը։ Ժամանակը առաջ սահեց, շովինիզմի ու ռազմի տենդը կամաց-կամաց մեղմացաւ. գերմանական ժողովուրդը սկսեց գնահատել և սիրել իր երկու մեծ հարազատներին ու բարեկամներին։ Բէբել և Լիբկնեխտ առաջ գնացին միշտ թև թևի, միշտ սոցիալիզմի աւետարանը արծարծելով։ Նոր-նոր ուժեր զինւորագրեցին բանակն աճեց։ 1878-ին նոր աղէտ հասաւ. Բիսմարկ, ամենազոր կամայապետը, սարսափած ընկերվարական գաղափարի ընդարձակ նւաճումներից՝ հրատարակեց ծանօթ „սոցիալիստական օրէնքները“, որով սոց.-դեմ. կազմակերպութիւնները ցրւեցին, բայքայւեցին, ընկերվարական թերթերը խափանւեցին, կլուբներ, ժողովատեղիներ փակւեցին, խափանւեց մի խօսքով, սոցիալիզմի լեգալ, օրինական պրոպագանդը։ 12 տարի իշխեց այդ դրակոնեան օրէնքը։ Շարժումը դրանով չխեղդւեց, հարկաւ։ Նա անցաւ

*) 1864-ին նա, դեռ բոլորովին երիտասարդ՝ սպանւեց Ժընեվի շրջակայքում, մենամարտի մէջ։

**) Լիբկնեխտ մեռաւ 1900-ին։

գետնի տակ։ Պրոպագանդը մղեց գաղտագողի, բայց անդիմադրելի Ընկերվարական օրգանները սկսեցին լույս տեսնել արտասահմանում (գլխաւորապես Ցվեյցարիայում)։

Եւ երբ 1890-ին, նոյն Բիսմարկը, դրդած ժամանակի ու հանրային առաջադիմութեան պահանջներից, վերացրեց բռնապետական ռէժիմների ծնունդ օրէնքները, Բեբել և Լիբկնեխտ տեսան իրենց առջև սոցիալիստական գիտակից աշխատաւորութեան ահագին վաշտեր, մի հարուստ ու յորձանուտ տնտեսական կեանք, մի չափազանց պարարտ գետին սոցիալիզմի պրոպագանդի համար։

Թափով նետուեցին յորձանքի մէջ, հիմնեցին ամենուրեք թերթեր ու տպարաններ, այժ աւին պարլամենտական գործունէութեան։ Իւրաքանչիւր ընտրութեանը՝



Ա. ԼԻԲԿՆԵԽՏ

աւելանում էր սոցիալիստ պատգամաւորների քանակը Ռայխստագի մէջ, իւրաքանչիւր մի ճառ պարլամենտական ամբիոնից, իւրաքանչիւր մի բրոշիւր սոցիալիստական տպարանից գրաւում էր հարիւրաւոր ու հազարաւոր պրոլետարներ. 45 տարի առաջ Բեբել մենակ էր պարլամենտի մէջ, իսկ այսօր, նրա մահուան օրը, սոցիալիստ պատգամաւորների թիւը Ռայխստագի մէջ հասնում է 111-ի *), իսկ սոցիալիստ ընտրողների թիւը կայսրութեան մէջ՝ չորս ու կէս միլիոն։ Քառասունև հինգ տարուայ ընթացքում—այդքան տարածութիւն...

Սրանից մի 20 տարի առաջ, երբ Ռայխստագում բորբոքւել էր պատմական բանակռիւը „ապագայ սոցիալական կարգերի“ մասին **), երբ բուրժուական մեծամասնութիւնը, գլուխ ունենալով հռչակաւոր (այժմ նոյնպէս հանգուցեալ) Օյգեն Ռիխտերին, սպառնալից պահանջում էր բացատրել սոցիալիզմի ծրագիրներն ու նպատակները, պարզել նրա ապագայ պետութեան ձևն ու էութիւնը, և երբ ամբողջ մտածող Եւրոպան ուշի ուշով հետևում էր Բեբելի անօրինակ ըմբշամարտին, գերման սոցիալ-դեմոկրատիան գարձեալ հրապարակ էր նետել իր երկու լաւագոյն մարտիկներն ու հռետորները—Բեբել և Լիբկնեխտ։ Ամենքի ուշադրութեան կենտրոնն էր Բեբել, որ և արտասանեց լաւագոյն ճառը, խօսեց մի քանի ժամ, խարանեց կապիտալիստական ռէժիմի տարկանոնութիւնները և ուրուագծեց գալոց ընկերվարական „իրաւակարգը“, ճշմարիտ ժողովրդապետութիւնը, առանց, սակայն, ծանրանալու այդ ապագայ ռէժիմի մանրամասների վրայ, որ ոչ մի բանական էակ ճշտել այժմից չի կարող։

Այնուհետև, դարձեալ ամեն անգամ, երբ որևէ հանդիսաւոր առիթ էր ներկայանում, կուսակցութիւնը միշտ առաջ էր քշում Բեբելին։

Վերջին տարիներս մեծ գործիչը, տկարութեան պատճառով, խիստ սակաւ էր բարձրանում Ռայխստագի ամբիոնը։ Եւ իր հազուագիւտ երևումով՝ աւելի ևս մեխում էր իր սուր հայեացքի և ճերմակ գլխի վրայ ընդհանուրի ուշադրութիւնը։ Եւ ծերունի վետերանի իւրաքանչիւր խօսքը սլաքի պէս թափանցում էր բոլորի մէջ՝ հակառակորդների, թէ համախոհների։ Հինգ տարի առաջ Վիլհելմ II-ի մի բացքերան, ձախողակ յայտարարութեան պատճառով՝ Գերմանիան փոթորկւել էր ծայրէծայր և անգամ բուրժուա-կղերական կուսակցութիւնները բարձրաձայն յանդիմանութեան ու ցասումի խօսքեր էին նետում կայսրին։ Խնդիրը դրւեց պարլամենտի մէջ։ Եւրոպան դարձեալ աչքերը յառեց դէպի Բեբելն և դարձեալ Բեբելն էր, որ բարձրացաւ Ռայխստագի ամբիոն՝ արտայայտելու ժողովրդական ցասումը, նշաւակելու թեթևամիտ վեհապետին, որ խաղում էր մի մեծ ազգի ճակատագրի հետ...

Բեբել ներկայ էր մի ուրիշ առթիւ, երբ „բարձր“, օգոստափառ հրամանատարների աշխարհում նորէն լսւել էր մի արտառոց „յայտարարութիւն“։ Այս անգամ թագաւորը չէր, այլ նրա որդին, քսանամեայ գահաժառանգը։ Նա արտասանել էր հրապարակային մի ճառ, խօսել էր սոցիալիստների մասին և անուանել նրանց՝ „թշնամականներ“. սոց.-դեմոկ. կուսակցութիւնը—թշնամականների կուսակցութիւն։ 1903 թ. յունուար 22-ն էր։ Ռայխստագի մէջ — ալէկոծութիւն, իրարանցում։ Սպասում են Բեբելի ճառին։ *Parteileiter*-ը, արդարև, այնտեղ էր և նրա աչքերը փայլատակում էին բարկութիւնից։ Մի ողորմելի լաճ — Թէկուզ և թագաժառանգ—յանդգնել էր վիրաւորել աշխատաւորական մեծ կուսակցութիւնը, ձեռնոց նետել

*) Ռայխստագի բոլոր պատգամաւորների թիւն է 397։

**) Գերմաներէն—*Zukunftstaatsdebatten*. Մի չափազանց հետաքրքրական գոկումենտ է, հրատարակւած առանձին գրքով։

ժողովրդական դատի ազնւագոյն ռահվիրաներին։ Պէտք էր բարձրացնել ձեռնոցը, և Բէբէլ արտասանեց իր կլասսիկ ճառերից մինը, կծու, հեգնախառն շանթերով անմոռանալի դաս տւեց օգոստափառ ֆանֆարօնին։ Ահա մի կտոր այդ ճառից, որ լաւագոյնը չէ.

... Հիմա տեսէք, պարոններ—դիմում է Բէբէլ Ռայխստագին—բաւական չէ, որ թագաւորն է մեր դէմ խօսում, այժմ էլ իր տղան է, գերման կայսրութեան թագաժառանգը։ Այդ քսանամեայ երիտասարդ պարոնը հրապարակ է գալիս և խօսում է մեր կուսակցութեան մասին, իբրև թշառականների կուսակցութեան (բուռն ծիծաղ և ծափեր)։ Ասացէք, խնդրեմ, ի՞նչ ծառայութիւններ է մատուցել այդ երիտասարդ պարոնը, ի՞նչ արժանաւորութիւններ ունի նա, որ գալիս է այդ տոնով խօսելու Գերմանական Սոցիալ-Դեմոկրատիայի մասին (փոթորկալի ծափեր սոցիալ-դեմոկրատների և այլ ձախակողմեան շարքերում)։ Եթէ կուզեն անուանել մեզ թշառականների կուսակցութիւն—ա՜հ, մենք չենք էլ զայրանայ դրանից, ի վերջոյ այդ անունը կը գառնայ պատուոյ անուն մեզ համար... Եւ գուցէ մեր առաջիկայ կուսակցաժողովը որոշէ, որ մենք այսուհետև անուանենք մեզ թշառականների կուսակցութիւն։ Դրանով և մենք նետում ենք ձեռնոցը պարոնի երեսին (բուռն ծափեր)։ Պարոններ, այդ երիտասարդը, որ մարդկային հաշւով դեռ բաւական ժամանակ ունի մինչև գահին տիրանալը, պէտք է գիտնար աւելի լաւ գործեր տեսնել, քան թէ խաղալ այժմից իսկ Գերմանական Սոցիալ-Դեմոկրատիայի կատաղի թշնամու դերը։ Ուզում եմ ասել, որ այդ վարմունքը նպաստաւոր չի լինի նրա ապագայի համար, իբրև գալոց գերմանական թագաւորի։ Որովհետև այն ժամանակ Սոցիալ-Դեմոկրատիան կարող է այլ դիրքիր, այլ ոյժ վաստակած լինել, քան այսօր և այն ժամանակ այդ երիտասարդ պարոնը գուցէ այլ ևս չի համարձակւի խօսել մեր մասին, որպէս թշառականների...

Զանգը ձեռին, նախագահը, կոմս Բալլեշտրեմ, ներվոտ ուշադրութեամբ հետևում էր հռետորին, պատրաստ գոռալու, օրէնքի անունով կանգնեցնելու և կարգի հրաւիրելու, եթէ Բէբէլ անցներ սահմանը, եթէ նա գործածէր որևէ անզգոյշ, հակապարլամենտական դարձուած։ Բայց հին առիւծը, որ գողում էր զայրոյթից, հասցրեց հարւածը, մեալով պատշաճ սահմաններում։ Սոցիալ-դեմոկրատները բերկրանքի մէջ էին, աջակողմը ոռնում էր կատաղօրէն, գողում էին մինիստրները, գողում էր ամբողջ Ռայխստագը, որ իր գոյութեան ամենագրամատիկ վայրկեաններից մէկն էր ապրում...

***

Այժմ նա մի բուռն մոխիր է, գոցած փոքրիկ արկղի մէջ, ամփոփուած Ցիւրիխի Իրակարանում... Սարսափեցնող ունայնութիւնը կեանքի... Ընկերները, բարեկամները և հեռաւոր գաղափարակից լեգիօնները համակուած են անհուն վշտով։ Բայց և ո՞րպիսի մխիթարութիւն։ Այդ մի բուռն մոխիրը այսուհետև էլ, իբրև կենդանի, լուսեղէն հնոց, պիտի շարունակէ ճառագայթել պայքարող ու ազատատենչ մարդկութեան վրայ։

Ի՜նչ հոյակապ թաղումն էր... Ցիւրիխը, գուցէ ամբողջ Հվեյցարիան չէր տեսել այդպիսի օր իր դարաւոր պատմութեան մէջ։ Նա տեսել էր անցեալ աշնան գերմանական կայսրի և իր շքախմբի հանդիսաւոր թափօրները, որ գրաւել էին երկրի բոլոր ծայրերից հսկայական բազմութիւն։ Բայց այդ բազմութիւնը կրկնապատիկ էր Բէբէլի յուղարկաւորութեան օրը. — այդպէս են վկայում անգամ պահպանողական մեծ թերթերը։ Ի՞նչ կը լինէր հապա, եթէ թաղումը տեղի ունենար Բերլինում...

Հարիւր հազարաւոր ուխտաւորներ և ամբողջ քաղաքը ամենապատկառոտ լռութեան մէջ մասնակցում էին անզուգական թափօրին։ Պատգամաւորներ բոլոր քաղաքակիրթ ազգերից, գոյնզգոյն անհամար դրօշակներ և պլակների ու ծաղկեփունջերի մի ծով... Տեսարանը եզակի է. սոցիալիստական առաքեալի մահը չէ դա, այլ ապօթէօզը, աստուածացումը. սոցիալիզմի կորուստը չէ դա, այլ նրա պանծալի յաղթանակը։ Պակներ—անգամ բուրժուա-ռամկավար մի շարք հատուածների ու հաստատութիւնների կողմից. գերմանական Ռայխստագն անգամ, ի դէմս իր նախագահի, մասնակցում է սգահանդիսին ցաւակցական իր հեռագրով և իր հոյակապ պակով, որ փուած է Բէբէլի ոտքերի տակ։ Ցաւակցական հեռագիրները աշխարհի բոլոր ծայրերից—անհաշիւ... Ապա և — ճառերը դագաղի վրայ, տասնեակ հռչակաւոր սոցիալիստական պարագլուխների սրտաշարժ դամբանականները և մանաւանդ Ադլերի—այդ միւս աւերակ ու մերձիմահ հսկայի—սասանեցուցիչ „Ինա՞ս բարևը“...

Ապա... կրակը ճարճատեց—և խօսքի ու գործի տիտանից մնաց այն մի բուռն մոխիրը։

***

Դժուար է մեզ, համեմատաբար երիտասարդներիս—որ գտնւել ենք այդ մեծ ու փայլուն անհատականութեան թովչի տակ, որ սնւել ենք վաղեմի օրերում նրա գրքերով ու յօդուածներով, լսել ենք խանդավառութեամբ նրա ճառերը և յուզւել ու ներշնչւել նրա առնական իդէալիզմով — դժուար է մեզ հաշտւել այդ մահւան գաղափարի հետ։

Ուղիղ գրեթէ քսան տարի է, ինչ տակաւին Նորեկ, Եւրոպայում, առաջին անգամը մեր ականջներին հնչեց այդ թովիչ անունը—Աւգուստ Բէբէլ։ Երիտասարդ, յափշտակող, գաղափարական սնունդի ծարաւ մեր սրտերը այնքա՞ն շուտ մտերմացան այդ անւան ու այդ հզօր գործիչի հետ, որ հանդիսանում էր ազատագրական մեծագոյն առաջամարտիկներից մինը համաշխարհային պատմութեան մէջ, մի անսովոր մարդ, որ խօսքի ու գրչի արւեստին միացնում էր և բանտային մի գրաւիչ էպոպէա, որ առօրեայ իրապաշտ մտահոգութիւնների, ռէֆորմային մանր, դրական աշխատանքի շրջանակներից գիտէր յաճախ դուրս նետւել և իբրև գուշակ, մար-

գարէ նայել դէպի ապագան, կարդալ գալոց դարերի մշուշի մէջ, ընդնշմարել այնտեղ սոցիալական վարդագոյն երազների իրականացումը, ազդարարել անխուսափելի գալուստը մեծ, արիւնոտ, համաշխարհային „կատաստրոֆի“, երբ պիտի խորտակուին միանգամ ընդմիշտ հեգ, բազմատանջ մարդկութիւնը կաշկանդող շղթաները, պիտի ջնջուին բոլոր չարաշուք անջրպետները, որ բաժանում ու կտրատում են մարդկային հասարակութիւնները տարբեր, հակամարտ դասակարգերի, պիտի խորտակուի կապիտալիստական ոճրանիւթ շէնքը աշխատաւոր պրոլետարիատի բուռն ու յաղթական գրոհի տակ և նրա արիւնոտ փլատակների վրայ պիտի կառուցուի, վերջապէս, հաւասարութեան, եղբայրութեան և ճշմարիտ երջանկութեան թագաւորութիւնը։

Եւ իմ ու ընկերների առաջին ընթերցագիրքը ուսանողութեան առաջին օրերում, գերմանական երկնքի տակ, այն չէր, ինչ որ յայտարարել էր Համալսարանի պրոֆէսորը, այն չէր, ինչ որ պաշտօնական գիտութիւնը մեծարում էր, փառաբանում, այլ այն գողտրիկ հատորը, որ տեսել էր մի քանի տասնեակ տպագրութիւն, որ թարգմանուել էր բոլոր քաղաքակիրթ և նոյնիսկ մի շարք կիսաքաղաքիրթ լեզուներով, որ մրցում էր Աւետարանի հետ, որ գրուած էր և այնքան սահուն և մատչելի գերմաներէնով. դա Բեբէլի հռչակաւոր աշխատութիւն էր—*Die Frau und der Sozialismus*, „Կինը և Սոցիալիզմը“։

Առաջին անգամ տեսայ իմ փայփայած հերոսին 1896-ի ամառը Լօնդոնում, ուր տարել էի „Դաշնակցութեան“ մի յիշատակագիրը Միջազգային սոցիալիստական համաժողովին ներկայացնելու։ *Hyde Park*-ի, աշխարհի մեծագոյն պարտէզի մէջ համախմբուել էր Լօնդոնի հարիւր հազարաւոր պրոլետարիատը և անթիւ օտարականներ եկել էին լսելու եւրոպական սոցիալիզմի ամենափայլուն հռետորներին։

Բազմաթիւ ամբիոնները տեղաւորուած են ինչպէս միշտ, իրարից հեռու, պարկի ահագին տարածութեան վրայ։ Ժօռէս տակաւին նոր էր սկսել իր կարիէրը, նրա անունը դեռ քիչ էր յայտնի այն ժամանակ—և Հայդ Պարկում ամենամեծ բազմութիւնը Ժօռէսի ամբիոնի շուրջը չէր, այլ Բեբէլի։

Հէնց այն վայրկեանին, երբ հռետորները պիտի բարձրանային իրենց ամբիոնները, մի կատաղի հողմ անցաւ վիթխարի պարկի վրայից, տեղաց Լօնդոնում չտեսնուած անձրևի տարափ։ Բեբէլ առաւ անձրևակալը և ելաւ բարձր պատուանդանի վրայ.

„*Partei und Kampfsgenossen!*“, սկսեց նա իր սիրեցեալ բառերով *) և իր հնչեղ, որոտուն բարիտոնով... Մոռացանք հողմ ու անձրև, խռնուեցինք ու սեղմուեցինք հռետորի շուրջը։ Այդտեղ էր լօնդոնաբնակ գերման պրոլետարիատը, այդտեղ էին բազմաթիւ ռուս ու լեհ էմիգրանտներ, բայց այդտեղ էր և անգլիացի պրոլետարիատը, որ չէր հասկանում Բեբէլի լեզուն, և այնուամենայնիւ ծափահարում էր խանդավառութեամբ, ծափահարում էր իրեն օտար և հարազատ առաքեալին, որ անշուշտ իր սեփական, պրոլետարական ցաւերից էր բառբառում այդ հողմի ու անձրևի մէջ և մոլեգնոտ աչքերով կայծակներ էր արձակում համաշխարհային կապիտալիզմի ու բռնութեան դէմ։

Եւ մի ամբողջ շաբաթ Կոնգրէսի ուշադրութեան կենտրոնն էր—Բեբէլ։

Այնուհետև տեսնում ենք նրան գրեթէ ամեն երեք տարի, միջազգային կոնգրէսներում։ Կոպենհագ չէր եկել։ Այն հսկայ և աննման թափօրներում, որ կազմակերպել էր դանիական սոցիալիզմը իր սիրուն մայրաքաղաքում և որի թողած տպաւորութիւնը անջնջելի կը մնայ բոլոր կոնգրէսիստների սրտերում,—այդ իմպօզանտ տեսարանի և սոցիալիստական այդ հանդիսաւոր խրախճանների մէջ մի բան, սակայն, պակասում էր. Բեբէլ բացակայ էր։ „Ծեր առիւծի“ անունը բոլոր շրթունքների վրայ էր։ Հարցնում եմ Կառուցկուն... — „Ոչ, չի գալու, պատասխանում է տխրութեամբ սոցիալիզմի հռչակաւոր թէօրեթիկոսը, որ մի քնքոյշ, որդիական սէր էր տածում դէպի Բեբէլ. ոչ, այսուհետև նա քիչ կ'երևայ հրապարակի վրայ, սրտի հիւանդութիւնը լուրջ է, մենք խնայում ենք նրան... *Wir schonen ihn!*“։

Կուսակցութիւնը, յիրաւի, գուրգուրանքով էր պահում նրան, խնայում էր այդ փխրուն ու թանկագին գոյութիւնը, որ հասել էր իր վերջալոյսին, ուզում էր, որ նա ապրի բացարձակ անդորրութեան մէջ, չլարէ իր ուժերն ու նիարդերը, չփոթորկուի այլ ևս քաղաքական պայքարների լոզունգներով։ Բեբէլ համակերպել էր, ապրում էր մեծ մասամբ Շվեյցարիայում, իր լուռ մեկուսացման մէջ, ապրում էր որպէս փակուած նժոյգը իր սանձը կրծոտելիս... գրում էր իր հարուստ ու ալէծուփ գործունէութեան յուշերը։ Սակայն, մեծ ագիտատորը միշտ չէր հնազանդւում Կուսակցութեան հրահանգին. ազնիւ կիրքը շարունակում էր լափել նրա յաւերժօրէն թարմ, երիտասարդ հոգին և նա մերթ ընդ մերթ դուրս էր նետուում իր ակամայ կղզիացումից և սլանում դէպի պարտականութեան դաշտը։ Մենք տեսնում ենք նրան մի տարի առաջ Վիեննայում, Վիկտոր Ադլերի 60-ամեակի առթիւ սարքուած մտերմական հանդէսին, տեսնում ենք քիչ յետոյ Բազէլի միօրեայ սոցիալիստական համագումարին, ուր նա արժանացաւ բուռն, չտեսնուած օվացիաների։ ապա քիչ յետոյ ևս—Բերնի Ֆրանս-գերմանական հաշտարար համագումարին։

Եւ դա նրա վերջին թատերամուտն էր։

***

*) „Կուսակցութեան և կռուի ընկերներ“։

Ի վերջոյ — „դաշնակցական“ մի յիշողութիւն... Բէբէլի, Քրիստաֆօրի և Հայկական խնդրի շուրջը։ 1901-ի աշնան, երբ „Դաշնակցութեան“ լիդերը փոթորկած սրտով գնում էր Կովկաս՝ շանթահարելու հայ ապիկար բուրժուազիային և հարթելու, գէթ ժամանակաւորապէս, ազատագրական կռուի ճանապարհը Հայաստանի և Եըլդըզի մէջ, նա անցաւ Բերլինով և տեսակցեց Բէբէլի հետ։ Թարգմանչի դերը կատարում էր Բերլինի համալսարանի ուսանող՝ մեր ընկեր բժ. Ս.։ Թէ վերջինը և թէ ինքը Քրիստաֆօր ասում էին, որ այդ այցելութիւնը մի յուզիչ անակնկալ էր Բէբէլի համար։ Երկար, ուշադրութեամբ ու խորին համակրանքով լսում է նա հայ քարոզչին։ Նիւթը նոյնն է... Ծանօթ գանգատը դիւանագիտութեան ոճիրների դէմ և „սրտի մարդկանց“ աջակցութեան անհրաժեշտութիւնը հայոց անօրինակ տագնապի մէջ։

Բէբէլ, որին հարկաւ, անծանօթ չէին մեր ժողովրդի դժբախտութիւնները, իսկոյն ցաւով մատնանշում է այն սարսափելի տրագիզմը, որի մէջ դրուած է հայկական պրօբլեմը. նա իսկոյն և եթ յայտարարում է, որ բնաւ յոյս չկայ խորտակելու գերման քաղաքականութեան գրանիտեայ ապառաժը, նամանաւանդ, որ հէնց այն ժամանակ Վիլհելմ կայսրը ջերմապէս բարեկամացել էր սուլթանի հետ և յոյս ուներ ճանկել նրանից հսկայական արտօնութիւններ։

Քրիստաֆօր լաւ գիտէր այդ բոլորը և հռչակաւոր սօցիալիստի յայտարարութիւնը աւելի ևս ամրապնդեց նրան այն համոզման մէջ, որ դիւանագիտութիւնից օգուտ չկայ և պէտք է յեղափոխական հարուածներով ստեղծել նոր դէպքեր ու տրամադրութիւններ։

Բէբէլ երկարօրէն գրեց „Դրօշակ“ին իր խորհրդածութիւնները հայկական հարցի և գերման քաղաքականութեան մասին։ Այդ նամակը, որ մի ընդարձակ քաղաքական տեսութիւն է, պահւում է այսօր „Դաշնակցութեան“ արշիվների մէջ և գուցէ կը հրատարակւի մօտ ապագայում։

Մ. Վ.

P. S. — „Դրօշակ“ի կողմից պատգամաւորներ էին Բէբէլի թաղման՝ ընկ. Ս. Արարատեան և ընկ. Անտոն Գօշ։ Ֆրանք պսակ գրին խմբագրութեան կողմից՝ *A Bebel—Les socialistes Arméniens du „Droschak“* մակագրութեամբ։

„Դրօշակ“ը հեռագրեց իր վշտակցութիւնը *Vorwärts*-ին, հեռագրեց Ֆրանսիայից և „Դաշնակցութեան“ ներկայացուցիչը Միջազգային Սօց. Բիւրօի մէջ.

„Խորունկ վշտով համակուած, ողբում ենք մեծ, պայքարող Վարպետին, որ իր գրչով, իր առնական ու պերճ լեզուով և իր անխոնջ, տիտանեան գործունէութեամբ՝ ամենամեծ դաստիարակիչներից մին եղաւ հայ նորագոյն երիտասարդութեան“։

ԹԵՐԹՕՆ

ԻՄԲԱՆԴԸ

V

«ԼՐՏԵՍԸ»

—

Homo homini lupus.

Մարդը մարդուն գայլ է.

Քաղաքական բանտարկեալները տեղաւորուած էին միւսներից անջատ՝ մի առանձին շինութեան մէջ, ուր հասնելու համար պէտք էր երեք բակերից անցնել, երեք երկաթապատ դռներ բանալ ու ամեն մի բակ միւսից բաժանուած պարիսպներով, որոնց վրայ շարուած էին ապակիների սուր-սուր կտորներ։

Այդ շէնքը մի ընդարձակ, բայց ցածր ու մռայլ միջանցք ունէր, ուր անձրևոտ ու ցուրտ օրերին զբօսնում էին կալանաւորները։ Մի օր այդպիսի զբօսանքի ժամին մի անծանօթ երիտասարդ յայտնուեց, շէկ ու ծաղկատար դէմքով, բոցագոյն մազերով, մանրիկ, ճպճպան աչքերով, նիհար, կծկուած մի արարած, որ քայլում էր մեն-մենակ, ակնյայտնի զգուշութեամբ, նայում էր աջ ու ձախ վախկոտ հայեացքով ու շարժումների մէջ այնքան վարանում կար, որ թւում էր դաւադրական։ Վերակացուի հետ եկաւ ու խառնուեց բազմութեանը։ Սկզբում ոչ ոք ուշադրութիւն չդարձրեց նորեկի վրայ. քանի մի րոպէ յետոյ սակայն զատ զատ խմբերի մէջ խուլ շշուկ բարձրացաւ, որ փուեց, տարածուեց ու բռնեց ամբողջ միջանցքը.

— Լրտե՞ս է...

Անկարելի չէր։

Օխրանայի *) և բանդային վարչութեան սովորական միջոցներից մէկն էր կալանաւորի անունով լրտեսներ տեղաւորել քաղաքականների մէջ ու գաղտնիքներ դուրս շորթել։ Բանդարկեալները սակայն շատ զգոյշ էին ու չափազանց զգայուն այդպիսի փորձերի հանդէպ։

Լրտես էր արդեօք այս հիւծախտաւոր թշւառականը, չգիտեմ. այժմ էլ չգիտեմ. բայց բազմութիւնը չորս կողմից շշնջում էր նախ ցածր, ապա աւելի և աւելի բարձրաձայն.

„Լրտե՞ս, լրտե՞ս“...

Մի խմբից միւսն էին անցնում աւելի անհանգիստներն ու ըմբոստները, յուզած դէմքով ինչ որ ասում, սրան նրան ցոյց տալով շիկահեր երիտասարդին, որ կարծես չէր հասկանում, չէր նկատում բարձրացող փոթորիկը և նոյն ձևով գնում գալիս էր պատերի տակից, միշտ վախլուկ, միշտ զգոյշ։

Լրտե՞ս... Այս մի հատիկ բառը հրաշէկ երկաթի

---

*) Պահնորդական բաժանմունք։

պէս դիպչում էր հոգիներին և ամենից անտարբերները, ամենից հնազանդներն իսկ ծառանում էին ցասումով ու դողում յուզմունքից։ Երկարատև ու անարդար կալանաւորումից, ֆիզիքական ու բարոյական զրկանքներից դառնացած, անթիւ մանր ու մեծ անիրաւութիւններ կրած, այդ երիտասարդները միշտ պատրաստ էին ողջ աշխարհը կործանել, եթէ հնար լինէր և այժմ էլ այս նենգ գաւադրութիւնն իրենց դէմ, այս լրտեսը, ինչպէս հաւատացած էին։ Ու տարիներով կուտուած թոյնն ու ատելութիւնը մրրկի պէս եռաց ու բարձրացաւ այս լղճուկ, այս եղկելի արարածի դէմ, որ մարմնացնում էր իրենց կրած տանջանքների հեղինակներին։

Ի՞նչ խելայեղ, ինչ անասնական կատաղութիւն էր, որ բրդաւ յանկարծ։

Սղմած բռունցքներ կային, որոնց ոսկորներն էին ճարճատում. զայրացկոտ աչքեր, որոնցից կայծեր էին ցայտում, ուռած, անհանգիստ կրծքեր, ցասումի հևքով թրթռուն և բոլորը՝ մի հատիկ ողորմելի արարածի դէմ, որ դարձեալ շարունակում էր իր վախկոտ ու դաւագիր զբօսանքը թշնամի շարքերի մէջ։

Եւ յանկարծ՝ տասն-քսան հոգուց բաղկացած մի խումբ, խռներամ ու անկարգ, նրա առաջը փակեց ու մի շղթայակիր երիտասարդի ուժեղ ձեռքը ծանրօրէն իջաւ նրա ուսին.

— Նզովւած լրտե՞ս, որոտաց երիտասարդը. թշւառականը գունատ, դողդոջուն՝ փորձեց ինչ որ ասել, թոթովեց անկապ խօսքեր, բայց չկարողացաւ վերջացնել, դիմացինի միւս ձեռքի ուժգին հարւածը նրա դէմքին՝ ատամները թաղեց շրթունքների մէջ, արիւնը ժայթքեց ռունգներից ու նա ձեռքերով ծածկեց դէմքը, ասես իր մահը չտեսնելու համար։ Այնուհետև ինչ պատահեց, անհնար է նկարագրել։ Ցասնեակ բռունցքներ ու ոտներ միաժամանակ բարձրացան, իրար հարւածելով, իրար տրորելով մի հատիկ զոհին հասնելու համար. ճիչ, խռպոտ հայհոյանք, կատաղի տնքոց, ատամների կրճտոց... Իւրաքանչիւրն աշխատում էր, որևէ կերպով այդ փբխրուն, այդ գձուձ մարմնին հասնել, նրա միսը բզկտել, գլխին հարւածել, մազերը փետել, եղունգներով կաշին ծւատել բզիկ բզիկ արիւնոտ լաթի պէս։ Այս անօրինակ ժխորի, մարմինների այս մութ զանգւածի մէջ այլ ևս ուրոյն պատկերներ, որոշ գծեր չկային, այլ ամբողջը մի նողկալի կոյտ էր, շարժուն, գալարուն, ոռնացող ու անձև, որ մի մութ ուժից հողմավար, տարւում էր մերթ դէպի միջանցքի մի ծայրը, մերթ դէպի միւսը, միշտ եռալով, միշտ ձևափոխւելով, ինչպէս մի այլանդակ հրէշ։ Ոմանք ընկնում էին ոտների տակ, տրորւում, քաշքշւում, ուրիշները ցատկում էին դիմացիների թիկունքների, գլուխների վրայից իրենց ատելութեան ու բինու առարկային հասնելու համար. օդի մէջ յանկարծ բարձրանում էր մի բռունցք, մի զոյգ ոտք շղթաների շառաչով, մերթ մի քանի գլուխներ ու թիկունքներ, ապա կրկին ոռնացող, հայհոյող, ճչացող կենդանական կոյտը խելագար թափով նետւում էր մի պատից՝ միւսը։ Դա սոսկ ծեծ չէր. քառասուն-յիսուն մարդ, ինչպէս յանկարծական խենթութեամբ գազանացած՝ յօշոտում, ծւատում էին դժբախտ զոհին, ասես լափելու համար։ Արիւնը ծորում էր, ներկում յատակը, պատերը դրնդում ոտների դոփիւնից, օդը լի էր տնքոցով ու խռխռոցով, մարդն այլ ևս չէր երևում, թւում էր, թէ նա հալւեց, փճացաւ բռունցքների ու ոտների հարւածների տակ, բայց կատաղութիւնը չէր մեղմանում, իրար էին կծոտում, տրորում, քաշքշում։

Եւ երբ վերջապէս վերակացուները ատրճանակները ձեռներին ու սուսերամերկ հասան ու զարկւեցին ուշակորոյս ամբոխի վրայ հարւածելով աջ ու ձախ, երբ ծեծողների խուժանը ցրիւ եկաւ, յետ քաշւեց, «ԼՐՏԵՍԻ» փոխարէն յատակի վրայ ընկած էր մի արիւնոտ անձև մսակոյտ։

Լրտե՞ս էր արդեօք... ես ի՞նչ գիտեմ. բայց *Homo homini lupus*...

«ՆԱԽԿԻՆ ՄԱՐԴԸ»

—

Նրան կոչում էին Ճէյթան։

Ի՞նչ էր իսկական անունը, չգիտեմ. ինչո՞ւ էին այդպէս անւանում, նոյնպէս չգիտեմ. գուցէ իր աչքերի համար։

Ա՜յդ աչքերը...

Չեմ ասի դիւական, ո՛չ. աւելի խենթի։ ցնորողի աչքեր էին բիբերի շուրջը կանաչաւուն, կեդրոնը կապոյտ՝ այդ կոլոր, փոքրիկ աչքերը շարունակ վռվռում էին, որպէս փայփլուն մոլորակ, անհանգիստ, յարաշարժ, բայց տարտամօրէն մռայլ։ Ուժեղ, ջլուտ դիմագծեր ունէր, որոնք սակայն աւելի աղօթողի, քան մոլի յանցագործի արտայայտութիւնն ունէին։ Կարճահասակ էր, նիհար, բայց երկաթի առողջութեամբ։

Անյոյս հարբեցողը նա գրեթէ մշտական մղձաւանջի մէջ էր. ցինիկօրէն կատակասէր, նա սակայն ոչ ոքի չէր վիրաւորում, չէր անարգում, ոչ ոքի չէր նեղում։ Անախորժ էին միայն նրա անվերջ դիմումները սրան, նրան, անգամ պաշտօնեաներին ու բանդապետին՝ մի բաժակ օղու փողի խնդիրքով։

Շղթաները միշտ աջ ձեռքով վեր քաշած՝ չ՝աղմկելու համար, գլխարկը յետ ձգած ծոծրակին, մազերը կարճ կտրած, կօճակները բաց, նա զբօսանքի ժամերին մտնում էր առաջին պատահածին, հետը քայլում, կատակներ անում, ապա անցնում միւսին և այսպէս անվերջ։

Գուցէ նրա հանդարտութիւնն էր պատճառ, որ վե-

բակացուները յաճախ դուրս էին թողնում նրան դրսի բակի նախնական քննութեան տակ եղած կալանաւորների հետ զբօսնելու։ Այսպէս էի մտածում ես իմ դիտողութեան վրայ հիմնւած ու գրեթէ սիրում էի Շէյթանին, առանց երբէք հետը խօսած լինելու։ Իր արտաքինի, այդ ջլուտ դէմքի, այդ անօրինակ աչքերի մէջ մի բան կար, որ որոշել, սահմանել չէի կարող, բայց ինձ գրաւում էր, թէև գիտէի ծանր յանցագործ է։ Ընկերս, սակայն աւելի փորձւած, աւելի երկար ապրած բանդում, մի օր ցրեց իմ պատրանքը։

— Զգուշացիր Շէյթանից, ասաց նա, դա մի ահարկու գազան է, „նախկին մարդ“, ընդունակ ամեն րոպէ զարհուրելի ոճիր գործելու։

— Ապա վերակացուները, շրջապատողներն այդպէս քաղցր են հե՞տը, հարցրի։

— Վերակացուները վախենում են, Շէյթանը քսան տարուայ տաժանակիր աշխատանքի է դատապարտւած սպանութիւնների համար. այդպիսիները խիստ վտանգաւոր են, որովհետև էլ կորցնելիք չ՚ունին. սա երրորդ դատապարտութիւնն է, երկու անգամ Սիբիրից փախել է, տունդրաների, ճահիճների, անտառների միջից և... ի՞նչ ես կարծում—հիւանդ ընկերը շալակած. մարդուն դժւար է ճանաչել. այս անիրաւը վեց սպանութիւն է կատարել, վերջացրեց նա մտախոհ։

„Հիւանդ ընկերը շալակած, Սիբիրի ճահիճների մէջ այս մարդասպանը, այո՛, մարդուն դժւար է ճանաչել, հոգին մութ բաւիղ է հազարաւոր խորշերով, որ դեռ ոչ ոք չի լուսաւորել“... մտմտում էի ինքս ինձ։

Եւ Շէյթանը ինձ համար դարձաւ աւելի խորհրդաւոր, աւելի առեղծւածական։ Ու ամեն անգամ զբօսանքի ժամերին հայեացքս նրանից չէի կարողանում բաժանել. հետևում էի նրա բոլոր շարժումներին, քայլւածքին, այդ ցնորական բրքիջներին, վովռան աչքերին։

Բանդարկւած էր նաև Շէյթանի կինը, մի յանցագործ աղախին, որ մեղադրւում էր բազմաթիւ գողութիւնների մէջ։ Շաբաթը մի անգամ կնոջ հետ տեսակցելու արտօնութիւն ունէր նա հէնց մեր բակում։ Կնոջ հետ էլ չափազանց քնքոյշ ու սիրալիր էր նա։

Մի հատիկ մարդ կար, որի հետ Շէյթանը հաշտւել չէր կարողանում ու մշտական հակամարտութեան մէջ էր. դա իր մօտիկ ընկերը, նոյնպէս Սիբիրից փախած պետին էր, իր կարգին շատ յայտնի ոճրագործ, մարդասպան, որ բանդն էլ սարսափի մէջ էր պահում։

Երկու կալանաւորների վէճը իրենց կանանց արիութեան ու ճարպիկութեան մասին էր. Պետին պնդում էր, որ իր կինը առաջնակարգ գող է և գերազանցում է Շէյթանի կնոջը, իսկ Շէյթանը այդ տանել չէր կարողանում, յուզւում էր, կատաղում, որովհետև նրա կարծիքով իր „կինը աշխարհի առաջին ճարպիկ գողն է, որ աչքի մազ կարող է թռցնել“։ Հին վէճեր, հին կռիւ, որ միշտ նորոգւում էր. այդ ժամերին նրանք երկսով էլ սարսափելի էին։ Շէյթանի աչքերը կատաղի փայլ էին ստանում, կարծես խորշերից դուրս պրծնելու համար. նա մարաղ մտած վագրի պէս նետւում էր դէպի հակառակորդը, փորձում էր բռնել կոկորդը, բայց սա աւելի ուժեղ ու բարձրահասակ, ոտքի կամ ձեռքի մի ուժգին հարւածով յետ էր մղում նրան ու գետին տապալում։ Կռիւը վերջանում էր, նրանք իսկոյն հաշտւում էին, շրջում միասին, կատակում, ծիծաղում, մինչև յաջորդ ընդհարումը։

Եւ մի անգամ Շէյթանի կինը այնպիսի յաղթանակ տարաւ, որ ամբողջ բանդը զարմացաւ։ Զորս-հինգ շաբաթից ի վեր նա տեսակցութեան չէր գալիս ամուսնու հետ, ասում էին պաաժել, զրկել են։ Ու յանկարծ մի օր յայտնւեց, մի նորածին երեխայ գրկին։ Շէյթանը քարացած մնաց. հայր էր դարձել բանդում առանց այդ գիտնալու... Նա զայրոյթից դողդողում էր. ոտները չուած, բռունցքը սղմած՝ արդէն պատրաստւում էր յարձակւել, երբ կինը ժպտալով մօտեցաւ, նրա ականջին մի բան փսփսաց. Շէյթանի դէմքը վայրկենապէս պայծառացաւ, աչքերը մեղմացան, անհուն քնքշութեամբ նա խլեց երեխան, սղմեց կրծքին, համբուրեց, ճչաց, քրքջաց ու սկսեց խենթի պէս պտոյտներ գործել բակում։

Շւարած նայում էինք. բանդային կեանքի չտեսնւած նորութիւն էր—Շէյթանը հա՞յր... Շուտով սակայն այս անօրինակ հանելուկը լուծւեց։ Երեխան ուրիշի էր, մի կալանաւոր կնոջ, որ ծնել էր բանդում, շատ մութ պարագաներում, իր պրձակման օրերին. բանդային մութ սիրոյ այդ վտանգաւոր պտուղը դուրս չտանելու համար, ուր նրան սպասում էր ամուսինը, դժբախտ կինը ստիպւած էր եղել լքել զաւակը, որ Շէյթանի կինը ընդունել, որդեգրել էր հաճոյքով, մօրն ազատելով ծանր փորձանքից։

Այսպէս թէ այնպէս, Շէյթանը հայր էր... Ու երբէք աւելի քնքոյշ, աւելի երջանիկ հայր։

Մութ ծագումով այդ փոքրիկ արարածը Շէյթանի բանդը՝ դրախտի և կեանքը՝ երանութեան փոխեց։ Կանանց բաժնի, վերին յարկի բարձր լուսամուտից, կինը ցոյց էր տալիս երեխան Շէյթանին և սա մոռացած զբօսանք, կատակներ, վէճ ու կռիւ, մոռացած նոյնիսկ իր օղին, կանգնում էր աղօթողի կեցւածքով, նայում էր վեր՝ ձեռքերը տարածած դէպի փոքրիկը, խօսում էր, կանչում էր, լալիս, ժպտում, քրքջում, կամ պարում էր ու ոստոստում երեխային զարմացնելու համար։ Հասնում էր տեսակցութեան օրը. Շէյթանը դրանը սղմւած՝ սպասում էր ու երբ յայտնւում էր կինը, նա խլում էր երեխան, համբուրում երեսը, աչքերը, ձեռքերը, ոտքերը, այնպիսի տենդով, կրքով, որ ասես ուզում էր իր կրծքի մէջ թաղել նրան. ապա վազվզում էր բակում, ցատկրտում, պարում խենթի պէս։

Այսպէս շաբաթներ ու ամիսներ ու տարի անցաւ. երեխան աճեց, մեծացաւ. Շէյթանը երջանիկ էր։

Եւ մի անգամ, զբօսանքի ժամին՝ Շէյթանը իզուր էր նայում դէպի վեր, դէպի լուսամուտը. երեխան չկար. նա կանչեց, ճչաց, իզուր. երեխայի փոխարէն երևաց կնոջ գլուխը. նա հասկացրեց նշաններով, որ երեխան ծանր հիւանդ է։ Կայծակ ճայթեց Շէյթանի գլխին. նա ուժգնօրէն խփեց ճակատին, աչքերից ցայտեցին արցունքները ու կանգ առաւ քարացած. ապա ճչաց խելայեղօրէն, պտոյտներ գործեց մատերը ճմռելով ու յանկարծ ուշքի եկածի պէս վազեց դէպի գրասենեակը, թռաւ կախեց լուսամուտի երկաթներից.

— Երեխաս հիւանդ է... երեխաս մեռնում է.. բժիշկ ասում եմ, ես ձեր... կը քանդեմ, կ'աւերեմ, կըսպանեմ, բժիշկ, անմիջապէս բժիշկ, ես ձեր... ճչում էր նա։

Նա սարսափելի էր. երկաթներն էր ճմռում, ատամներով կրծոտում փակուած գազանի պէս։ Ո՞րտեղից բժիշկ... սարի պէս տղամարդիկ էին մեռնում առանց բժիշկի ու դեղի, ո՞վ էր մտածում երեխայի համար բժիշկ բերել և այն՝ անմիջապէս։

Շէյթանը սակայն պահ ընդում էր, հայհոյում, մռընչում, լալիս, աղերսում, բոլորը միաժամանակ. ոճրագործն ու քնքոյշ հայրը, „նախկին մարդն" ու զգացող, տանջուող, սիրող սիրտը փոխ առ փող յաջորդում էին իրար, լրացնում էին իրար ու դժուար էր առանց արգահատանքի ու դառն սոսկումի նայել այդ մարդուն։

Սպասում էինք...

Ակնյայտ էր, որ Շէյթանը սարսափելի բան պիտի անէր, եթէ իսկոյն բաւականութիւն չստանար։

Բանդապետի հրամանով՝ երկու-երեք ուժեղ վերակացուներ մօտեցան նրան, քաշեցին, ցած բերին լուսամուտից և շալակած տարան ձգեցին միւս, ներսի բակը ու դուռը փակեցին։ Այնտեղից դեռ մի առժամանակ լսում էր Շէյթանի ճիչը, հայհոյանքը. նա լալիս էր, տնքում, բժիշկ էր կանչում։ Ու յանկարծ՝ նա արիւնոտած երեսով ու վիրաւոր, քերթուած ձեռներով յայտնուեց ահագին բարձրութեան պատի վրայ, ցից ցից տնկուած ապակու սուր կտորների մէջ. ինչպէս էր բարձրացել, այդ միայն ինքը գիտէր, այդ զարմանալի մարդը։

— Բժի՛շկ, մռնչաց նա բարձրից և կատուի ճարպիկութեամբ վար նետուեց արիւնլուայ ու քերթուած ձեռներով ու ծունկերով, կրկին սողաց դէպի գրասենեակը.

— Բժի՛շկ, բժի՛շկ, երեխան մեռնում է, հեծեծում էր նա...

Մարգկային հոգին մութ անդունդ է...

Շէյթանի երեխան չմեռաւ. ես նրան առողջ թողեցի բանդում։

ՏԱՐԱԳԻՐ

ՄԵԾ ՀԱՆԴԻՍԱՎԱՅՐԻՑ

Ս. Կարապետ, յուլիս

Ս. Կարապետ եմ... Երազ է թւում, մի մեծ, սքանչելի երազ։ Ծընէվ—Պետերբուրգ—Ս. Կարապետ։ Այնքա՞ն շատ են և այնքան ուժեղ՝ տպաւորութիւններս։ Ինչպէ՞ս նկարագրեմ։ Գրիչ պէտք է։ Այս բնութիւնը իրաւ որ դիւթիչ է։ Մեր Ղարաբաղի հետ համարձակ կարող է մրցել։ Միայն... խե՜ղճ է, ընկճուած է ժողովուրդը նիւթական զրկանքների բեռի տակ։ Բայց արդէն նշմարելի են վերածնութեան նշոյլները։ Զուարթ տրամադրութիւն եմ տեսնում ամենուրեք։ Երիտասարդ տարրերը... նրա՞նք են աւանգարդը, նրանց վրայ է մեր յոյսը...

Համազգային մեծ յօբելեանի շուրջը—անկարագրելի խանդավառութիւն։ Զգիտեմ, երբևիցէ այս դժբախտ վայրերը տեսա՞ծ են այսքան շքեղ ու կազդուրիչ հանդէսներ։ Մի հոյակապ միտինգ։ Պերճաբան և սրարշաւ Վռամեանի հետ ամբիոն է բարձրանում մեր Ռոստոմը։ Կարո՞ղ էք երևակայել Ռոստոմին՝ մ ի տ ի ն գ ա յ ի ն հ ռ ե տ օ ր ի դերում...

Ահա և Արմէն-Գարո, Մարզպետունի, երիտասարդ ընկեր Բօնապարտեան, ահա Անդրանիկի Վարդան Վարդապետը—մեր լեգենդական վեղարաւորներից մինը։ Եւ քանի՜ ուրիշներ... Ուխտաւորների մի ծով։

Ուրախ են ամենքը, տոգորուած վայրկեանի վեհութեան գիտակցութեամբ։ Բարձր են բաբախում սրտերը։ Զէ՞, 1500-ամեայ մի մոռացուած ու հալածական գոյութեան յօբելեանն է, նրա վերածնութեան յօբելեանը։ Զէ՞ 1500 տարի առաջ, այստեղ, այս նոյն էքնաղ, բանաստեղծական վայրերում Սահակ ու Մեսրոպ երկնել են իրենց հոյակապ ու ազգաշէն ծրագիրները։

Եւ մենք կարծես տեսնում ենք նրանց, այդ պանծալի դէմքերը։ Այս վեհափառ բարձունքների և պայծառ հորիզոնների մէջ ասես ճախրում են նրանց անմահ հոգիները՝ կատարուող խրախճանների անզուգական տեսարանի վրայ... Ի՞նչ կարող է լինել աւելի վեհ մեզ համար — մենք, որ այնքա՞ն տարիներ անձկութեամբ երազել ենք այսպիսի հանդէսներ, այս բազմատանջ ժողովրդի ծոցում...

Երգ, ծիծաղ, խլացուցիչ թմբկահարութիւն, „դաշուլ ու զուռնա"...

Ցուզմունքը բուռն շեշտերով խօսում է բոլոր հռետորների ճառերի մէջ.

„Էս պահ մը կերևակայեմ զիս 1600 տարի առաջ—սկսեց Վռամեան—երբ մեր հին աստուածները կը թագաւորէին, երբ կար Վահագնը, Աստղիկը և ուրիշներ։ Եկան նոր աստուածները, յաջորդեցին հներուն ու դէպի իրենց քաշեցին այն ժողովուրդը, որ հներուն կ'երկրպագէր և ուխտի կուգար։

"Եղբայրնե՛ր ու քոյրեր,

„Այսօրուան տօնը տօնն է անոնց, որոնք 1500 տարի առաջ ձեր հողէն ծնան։ Մեսրոպը, որ այնքան տարիներէ իվեր կապրի մեր սրտերուն մէջ, գուցէ հոս է, գուցէ իր հոգին կը սաւառնի մեր գլխուն վերև. մենք կերթանք, դարերը կանցնին, բայց նա միշտ հո՛ս է, միշտ կապրի։

„Գրերու գիւտը եղբայրութեան գիւտն է, նայեցէ՛ք սա քրդախօս հայերուն, որոնք եկեր են հոս իրենց եղբայրները տեսնելու և որոնք Մեսրոպի գրերուն շնորհիւ միայն պիտի կրնան ապրել մեր եղբայրութիւնը։

„Եղբայրնե՛ր, որ ինձ կը հասկնաք, քոյրե՛ր, որ ինձ չէք հասկնար, եթէ առաջ, Անահիտն ու Վահագնը ձեզ կը քաշէին հոս, այսօր գրերու տօնն է, որ կը բերէ ձեզ յիշեցնելու, թէ որքան մեծ մարդ էր նա և ո՞րքան ետ մնացած ենք մենք։

„Այս ժողովուրդը պիտի ապրի, պէտք է որ ապրի, ապրի՝ կուռելու համար բռնութեան դէմ, տգիտութեան դէմ, չարիքին ու հիւանդութեան դէմ։ Աստուած մարդս ստեղծած է „ըստ պատկերի իւրում"։ Ո՛չ իբրև ստրուկ, ո՛չ մեզի ու ձեզի պէս. այլ իբրև մարդ, առողջ՝ հզօր ու լաւ։

„Գիրը անոր համար է, որ գիտնանք չարն ու բարին. այն ազգեր, որոնք գիր ունին—հարուստ, ուսեալ, զօրաւոր են։ Իսկ չունեցողները կամ կորսուած են կամ կորսուելու դատապարտուած են։

„Ամենամեծ տօնն է այս—գրի տօնը, ազգերու փրկութեան տօնը, գրին՝ որու դէմ ոչ թնդանօթը կարող է կանգնել, ոչ սուրը։ Գրով մենք պիտի ճանչնանք մեր բարեկամն ու թշնամին։

„Նոր Մեսրոպներ պէտք են, գաղափարի խունկը բերելու այս նոր տաճարին, լուսոյ տաճարին առաջ ծխելու համար, բռնութիւնը հալածելու և նոր աստուածներու տաճարը ամրապնդելու համար։ Աշխարհը ուժովինն է, գիտակից ու բարոյական ուժովին, որ գիտէ քալել լեռներէն, անապատներէն, ձեռքին կողմնացոյցն ու զէնքը բռնած։

„Երթանք այդ ճամբայէն, եղբայրնե՛ր, կողմնացոյցն ու սուրը մեր ձեռքին. երթանք երախտագիտութեամբ լեցուն, այո՛, երախտագիտութեամբ։ Երախտագէտ ժողովուրդը չի մեռնիր, մենք դեռ պէտք ունինք Մեսրոպներուն ու անոնց երախտապարտ ըլլալուն, մեր ճանապարհը չմոռնալու համար։

„Երբ Լուսաւորիչը Քրիստոնէութիւնը կը բերէր, ան խաչի նշան մ'ունէր, որով դևերը կը հալածէր, ճամբայ կը բանար։ Մենք ալ ունինք մեր խաչի նշանը, բանանք ճամբան, տգէտները չեն, որ պիտի անսայթաք ընթանան. քալելու համար գիտակից ըլլալու պէտք ունինք. մարդ ըլլալու համար կուիլ գիտնալու ենք. իսկ կուելու համար պէտք է կազմակերպուինք։

„Մեր զօրութիւնը մեր՝ իբրև ազգ կազմակերպուելուն մէջ է. իրար օգնելու, սուր ու գրիչ գործածելուն մէջ է. նա, որ մէկ ձեռքը սուր, միւս ձեռքը գրիչ ունի, չի մեռնիր։

„Խաչին հետ խելք պէտք է, սուրին հետ՝ գրիչ առանց մէկին, ոչինչ է միւսը. տգէտը չի կրնար պաշտպանուիլ, անուսը կը մեռնի։

„Երբ գրիչ կըսեմ, դուք չհասկնաք Ամերիկայէն վերադարձող մարդոց գրպանին մէջ եղող ոսկիէ գրիչը. ոչ, այլ այն գրիչը, զոր մեզի տուաւ Ս. Մեսրոպը։

„Հայե՛ր, ձեր փրկութիւնը նախ գրչի, յետոյ սուրի մէջ է. սո՛ւր կ'ըսեմ ոչ թէ վախով, փսփսալով, այլ հոս, կառավարական պաշտօնեաներու ներկայութեանը։ Ով ինքզինք պաշտպանելու անկարող է, չի կրնար ապրիլ, կը մեռնի. բոլոր մեծ պետութիւնները կապրին իրենց գրիչովն ու սուրովը"։

„Ուստում առէ՛ք, սուր առէ՛ք"։

Վերջին բանախօսն էր Ռոստոմ.

„Մենք յոյս ունէինք, հայրենակիցնե՛ր, այս հանդէսը տօնել միւս հատուածների մէջ ապրող մեր եղբայրներուն հետ, որոնք նոյնքան բաժին ունին այս համազգային տօնին մէջ, որքան մենք։ Այս բացակայութիւնը ցոյց կուտայ, որ դեռ մենք թերի, անկազմակերպ ազգ մըն ենք։ Քաղաքական դժբախտ պարագաները մեզ անջատեր են իրարմէ. մէկ մասը Ռուսաստան, միւսը՝ Պարսկաստան, ուրիշ մը՝ Ամերիկա"— աշխարհի ամեն կողմ, ուր շունչ մը կայ, մարդկութիւն կայ։

„Պարզ, զուարճութեան, խնճոյքի տօն մը չէ այս, այլ տօն մը, որ դարերէ ի վեր գոյութիւն ունեցեր է և որուն նպատակն է եղեր բերել, ամփոփել հոս, հայութեան այս օրրանին ու սրտին մէջ ազգի զաւակները—զանոնք եղբայրացնելու, անոնց քաղաքական ու ազգային հայեացքները մէկտեղցնելու համար։

„Եթէ 5 տարուան սահմանագրական ռէժիմը չտուաւ շօշափելի արդիւնքներ, բայց գոնէ հնարաւորութիւն տուաւ վերանորոգելու մեր պապերու տօնը, հայկական ոլիմպիական խաղերու հսկայ տօնը։

„Դուք գիտէք, որ մեր նախարարական բարձր տոհմերը այստեղ կուգային մրցելու, իրենց ոյժն ու քաջութիւնը ցուցադրելու, զիրար ճանչնալու համար, — սա անհրաժեշտ էր մեզ պէս ազգի մը համար, որ ունի աշխարհագրական ինքնուրոյն կազմութիւն։ Մենք այժմ զիրար չենք ճանչնար. այսուհետև է որ հնարաւորութիւն պիտի ունենանք զիրար ճանչնալու։ Այս տօնը թո՛ղ ըլլայ եղբայրութեան և ծանօթութեան տօնը. մենք յոյս ունինք, որ կարճ ժամանակ վերջ, հոս առիթը պիտի ունենանք տօնելու հին հեթանոսական խաղերը—կատարելու հայկական մեծ ոլիմպիականը"։

ԱՐՇԷՍ